№ 63 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 25

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 25 № 63

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная уп. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

(37-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12 ամս. 10 ռուբ., 11 ամս. 10 ռ., 10 ամս. 9 ռ., 9 ամս. 8 ռ., 7 և 6 ամս. 6 ռ., 5 ամս. 5 ռ., 4 ամս. 4 ռ., 3 ամս. 3 ռ., 2 ամս. 2 ռ., 1 ամս. 80 կ. և առաքման ծախք՝ 20 կ.: Ամերիկա տարեկան 6 դոլլար, Եւրոպա 30 ֆրանկ, Պարսկաստան 10 ռուբլի, Թիւրքիա 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ՕԼԳԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՎԱՐԴՊԱՏՐԻԿԵԱՆՑԸ իր զաւակներով յայտնում է իր բարեկամներին և ծանօթներին, որ ամսիս 26-ին, աւագ հինգշաբթի օրը, կատարվելու է հոգեհանդիստ՝ առաջինի հանգուցեալ ամուսնու և վերջինների սիրելի հօր՝

Յարութիւն Թադէոսեան Վարդպատրիկեանցի

տարելիցի առիթով, նաև առաջինի տագիր և վերջինների սիրելի հօրեղբօր՝ Վիէննայում վախճանված

Յովհաննէս Թադէոսեան Վարդպատրիկեանցի

մահվան քառասունքի առիթով, որ լինելու է Խոջիվանքի եկեղեցում ս. պատարագից յետոյ: Պատարագը կը սկսվի ժամը 10-ին, իսկ հոգեհանդիստը 11½ ժամին:
244. 1—1

«...ը» և բոլոր ... Թ, մարտի 27-ին
ԲԺԻՇԿ
ԵԳՈՐ ՍԵՐԳԷԵՎԻՉ ԲԱԲԵԱՆԻ
մահվան կիսամեակի օրը, առաւօտեան ժամը 11½-ին, Վանքի մայր եկեղեցում տեղի կունենայ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ, որի մասին խորին կսկիծով յայտնում է հանգուցեալի այրին:
(չ. հ.) 244. 2—1

Սրանով յայտնվում է ի գիտութիւն ամենքի,

որ յունվարի 1-ից 1909 թ. Թիֆլիսի և Անդրկովկասի շրջանների համար բացված է կէրոսինի, նաւթի և այլ արդիւնքների վաճառումն՝ Եղբ. Նօրէլի Ընկ., և որ այդ արդիւնքների վաճառումը բացառապէս յանձնված է «Գ. Ի. Տէր-Աբրամով և Մ. Ա. Պետրոսեան» ֆիրմային: Գրասենեակը և պահեստը գտնվում է Թիֆլիսում, Աւճալեան փող. վրա, անկիւն Մաղուտնայա փողոցի, № 3 (տէլէֆոն № 479), ուր և պիտի դիմել պատուէրների համար:

Կառավարիչ գրասենեակի՝ Լ. ԵԱ. ԶԱԽԱՐՈՎ
(չ.) (առ.) 245. 1—1

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. Խորհուրդը

առաջիկայ զատկական տօներին աղքատներին նպաստներ տալու համար շնորհակալութեամբ ընդունում է նուէրներ դրամով, մթերքներով և շորով, ամենայն օր ժամը 9-ից մինչև 2-ը ընկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская площадь, № 7, с. д.): Խոնարհաբար խնդրվում է բարեսիրա ունևորներին օգնութեան հասնել թշուառներին:
(Ե. Չ. Հ.) առ. 242. 3—2

ԿՈՉ

Թիֆլիսի Զրի եւ Էժանագին Ճաշարանների եւ Թէյատների Ընկերութեան կոմիտէն խնդրում է բարի մարդկանց բարեհաճել օգնութեան գալ՝ նուիրելով թէ փող և թէ ուտեստի պաշարներ չքաւորների առաջիկայ Թաթախման համար և հնարաւորութիւն տալ դրանով Զատկի տօնին բարեհաճիլ իր աղքատների սեղանը:

Իւրաքանչիւր նուիրատուութիւն կընդունվի խորին երախտագիտութեամբ: Նուիրատուների թւից կախված կը լինի թաթախվող չքաւորների թիւը: Խնդրում են նուիրատուութիւններն ուղարկել ընկերութեան նախագահուհի Ելենա Արտէմիեվնա Աւթանդիլեանին, Գրիբոյեդովսկայա 26, կամ թէ ընկերութեան սեղանատունը, Արմենական տուպիկ, սեփ. տուն:
(չ. հ.) (առ.) 252. 2—1

ԾԱԽՎՈՒՄ Է

ԵՐԿՈՒ ՔԱՐԱՇԷՆ՝ ԵՐԵՔ-ՅԱՐԿԱՆԻ ՏՈՒՆ Մուխրանսկայա փող. № 23 և № 25, կուրգետի ափին, նոր կառուցվող Մուխրանեան կամուրջի մօտ: Կոմիսիոներների ծառայութիւնը թոյլատրվում է: Տեղեկութիւնները տնային Գրասենեակում:
(չ.կ.հ.) (առ.) 248. 3—1

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԸ

Մեր հարևան Ատրպատականի մի նշանաւոր մասը գտնվում է ներկայումս տնտեսական տագնապի մէջ, և որ աւելի սոսկալին է, վտանգված է և նրա առաջիկայ դրութիւնը:

Երկրի խառնակ վիճակը, մթերքների պակասութիւնը, հաղորդակցութեան նեղված լինելը դրել են ազգաբնակութեանը կենսական ծանր պայմանների մէջ:

Եւ միևնոյն ժամանակ պարսիկ երկրագործը անկարող է մշակել հողը և սերմանել նրան թէ ընդհանուր ապահովութեան բացակայութեան և թէ սերմացու չունենալու պատճառով:

Հողը սերմելու ժամանակն է, և եթէ պարսիկը թերանայ իր պարտականութիւնների մէջ դէպի իր դաշտերը և նրանց չը սերմանի, այն ժամանակ նա պատրաստում է իր համար սով առաջիկայ տարվայ համար և նա պէտք է դիմէ մուրացկանութեան, յանցանքների և կամ հեռանայ իր երկրից՝ դիմելով պանդխտութեան:

Մեր հարևան երկրի այդպիսի անմխիթար վիճակը զգալի պէտք է լինի ոչ միայն իրանց, այլ և մեզ՝ կովկասցիներիս համար: Եւ հէնց այս վերջին երկու տարիների ընթացքում, ինչ Պարսկաստանը գտնվում է անկարգ և անտէր վիճակի մէջ, շատ թուլացան յարաբերութիւնները երկու երկիրների միջև և տեղի ունեցան անտեսական քայքայումներ առևտրական ասպարիզում:

Եթէ ձմեռվայ ընթացքում Պարսկաստանի ազգաբնակութիւնը փոքր ի շատէ հանգիստ աչքով էր նայում իրան շրջապատող անկարգ վիճակին, նա յոյս ունէր, որ շուտով կանցնի մղձաւանջը և ինքը կը վերաստեղծի կանոնաւոր կուլտուրական կեանք. բայց այժմ, երբ արդէն բացվել է գարունը և հողերի մի մասը մնում է անմշակ դրութեան մէջ, ազգաբնակութիւնը ընկել է վրդովմունքի մէջ և յուսահատ կերպով է նայում իր ապագայի վրա:

Պարսկաստանի ժողովուրդը յոգնել, մաշվել է անցողական շրջանի չափազանց երկարատև և ծանր լինելուց. նա հանգստութիւն է պահանջում, որ կարողանայ նուիրվել իր չարքաշ կեանքի սովորական զբաղմունքներին:

Եւ Պարսկաստանի քաղաքական գործողները պէտք է կշռեն իրերի ներկայ վիճակը: Թէ դիմադրական և թէ կառավարչական շրջանները պէտք է հոգատար լինեն թեթևացնելու ժողովրդի վիճակը և հնարաւորութիւն տան աշխատաւոր մարդուն՝ մշակելու և սերմանելու իր հողերը:

Անդրկովկասը չէ կազդուրվել իր վերջին տարիների արհաւիրքներից և շուտով էլ չի վերակազդուրվի կատարելապէս, իսկ Ատրպատականը աւելի ևս ծանր վիճակի մէջ է:

Պարսկական ճգնաժամը շատ թանդ նստեց իր ժողովրդին:

Ա. Քալանթար

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ II ԿՈՆԳՐԷՍԸ

Այսօր, մարտի 25-ին, կամ նոր տոմարով ապրիլի 7-ին, Եգիպտոսի Ալէքսանդրիա քաղաքում բացվում է Եգիպտոսի խրդիվի նախագահութեամբ Հնագիտական Միջազգային II կոնգրէսը, որի առաջին նիստերը, այն է ապրիլի 7, 8 և 9-ին, լինելու են Ալէքսանդրիա քաղաքում, իսկ ապա Կահիրէում:

Այդ կոնգրէսի կազմակերպիչ մասնաժողովից ստացած լինելով հրաւէր՝ մասնակցելու կոնգրէսին, ես, դժբաղդաբար, թէ տեղի հեռաւորութեան և թէ մի քանի այլ պատճառներով, անկարող եղայ գնալ Եգիպտոս և մասնակցել կոնգրէսի պարապմունքներին, բայց ինձ ուղարկված ծրագրից օգուտ եմ քաղում մի քանի տեղեկութիւններ հաղորդելու այդ կոնգրէսի մասին, որին մասնակցելու համար երկրագնդի զանազան ծայրերից գիտնականներ փութացել են Եգիպտոս:

Հնագիտական կոնգրէսի պաշտօնական բացումը խրդիվի նախագահութեամբ կայանալու է շաբաթ օր, մարտի 28-ին (ապրիլի 10-ին), իսկ Զատկի տօնների պատճառով, նիստերը սկսվելու են միայն երկուշաբթի, մարտի 30-ին (ապրիլի 12-ին):

Կոնգրէսը բաղկացած է լինելու 6 սեկցիաներից, այն է՝ 1) Նախակլասիքական Հնագիտութիւն, 2) Կլասիքական Հնագիտութիւն, 3) Պապիրոլոգիա, 4) Կրօնական Հնագիտութիւն, 5) Բիւզանդական Հնագիտութիւն, 6) Նումիզմատիկա և Աշխարհագրութիւն:

Մեզ հայերիս համար առանձնապէս հետաքրքրութիւն են ներկայացնում Կլասիքական Հնագիտութիւնը և Բիւզանդական Հնագիտութիւնը: Այդ բաժնում զեկուցագրեր են կարդացվելու Եգիպտոսի և Ցունաստանի յարաբերութիւնների մասին Պսամմետիխից սկսեալ մինչև Արևելեան Կայսրութեան հաստատութիւնը, ալէքսանդրեան արուեստի, ալէքսանդրեան գրականութեան, գիտութեան և գրականութեան, բիւզանդական հնագիտութեան, զարդական արուեստի մասին, ինչպէս և այն յարաբերութիւնների մասին, որ արաբների ժամանակի Եգիպտոսը ունեցել է բիւզանդական կայսրութեան հետ: Այդ շրջաններին վերաբերեալ ուսումնասիրութիւնները սատակ շահեկան են, որովհետև վերաբերում են այն դարագլուխներին, որոնք ազդեցութիւն են ունեցել հայկական գրականութեան և քաղաքակրթութեան վրա:

Կոնգրէսի նախագահն է յայտնի գիտնական Մասպերօն:

Աւելի մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդենք, երբ կը ստանանք կոնգրէսի շրջաբերականները:

Մեր բարեմաղթութիւնները և լաւագոյն իղձերը կոնգրէսի լիակատար աջողութեան և արդիւնաւէտ գործունէութեան համար: Ցաւում ենք, որ առիթ չունեցանք մասնակցելու գիտնական կոնգրէսի զբաղմունքներին և մեր հնչին լուման ևս ձգելու նրա գործունէութեան սափորի մէջ:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարիզ, 23 մարտի

Երէկ ցերեկով արտաքին գործերի մինիստրութեան մէջ աւստրօ-ունգարական դեսպանը Բոսնիայի միացման վերաբերեալ քայլ արեց:

Լոնդոնից Հաւասի գործակալութեանը հաղորդում են, որ այն կարծիքն է տիրում, թէ Անգլիան և Ֆրանսիան նպաստաւոր պատասխան կը տան Աւստրօ-Ունգարիայի առաջարկութեանը—փոխել բերլինեան դաշնագրութեան 25-րդ յօդուածը: (Հ. Գ.)

Հռոմ, 23 մարտի

Թագաւորը ընդունեց զինուորական մինիստր Գազանոյի հրաժարականը և մինիստր նշանակեց գեներալ Սպինգարդիին: (Հ. Գ.)

Աթէնք, 23 մարտի

Տէօտոկիսը յետ վերցրեց հրաժարականի խնդրագիրը, բացատրելով թագաւորին, որ պարլամենտում մինիստրութիւնը առաջվայ նման վայելում է հաստատուն մեծամասնութեան համակրանքն ու պաշտպանութիւնը: Պարլամենտի արձակումը միանգամայն վաղաժամ կը լինի:

Ամբողջ մամուլը միաբերան ողջունում է մինիստրական ճգնաժամի այդօրինակ լուծումը: (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թաւրիզ, 23 մարտի

Մօտ օրերս կառավարական նահանգապետ Մօհտեշամ-ուս-Սալթանէն ձերբակալվեց Ուրմիայի ֆէդայիների պետ քրիստոնեայ Ֆէրամօրսգանի (?) ձեռքով: (Հ. Գ.)

«Բ. Բ.» լրագրում տպագրված է այն հեռագրի պատճէնը, որը Պարսկաստանի ամենահեղինակաւոր անձնաւորութիւններից մէկը՝ յայտնի միլիոնատէր Սարդար Մանսուրի որդի Թաղի-Զադէն ուղարկել է Թաւրիզից Բաշտ՝ Գիլանի ապստամբութեան պարագլուխներին: Թաղի Զադէն, որ առաջին մէջլիսի նախկին պատգամաւորներից մէկն է, արտայայտում է այն գործելակերպը, որին պէտք է հետևէ, իր կարծիքով, պարսկական ազատագրական շարժումը: Ի նկատի առնելով նրա բարձր հեղինակաւորութիւնը Պարսկաստանում, առաջ ենք բերում այդ ծրագիրը:

«Ինձ թւում է, որ հարկաւոր է անպատճառ բոլոր ոյժերով աշխատել ընդհանուր համակրութիւն վաստակելու՝ արդարադատութիւն և իրաւահաւասարութիւն տարածելով ամբողջ ազգաբնակութեան մէջ, չը նեղացնել դրամատէրերին, վաճառականներին և կալուածատէրերին, ամրացնել շրջակայքը իսկական ինժեներների ցուցմունքներով, պատրաստել մթերքներ, զէնքեր և ռազմամթերքներ ամենախոշոր չափերով, հրաւիրել օտարերկրեայ փորձված ինժեներներ, օֆիցէրներ և մեխանիկներ նրանց խորհրդից և ցուցմունքներից ճշդութեամբ օգտվելու, վանդի չենթարկել թշնամիների կեանքն ու գոյքը, գրաւել թափառաշրջիկ հարևան ցեղերի, գլխաւորապէս Տարըշի և Թալըշի առաջնորդներին, կազմակերպել կանոնաւոր կերպով վարժեցրած զօրքեր, պաշտպանել ժողովուրդը կեղծ սահմանադրականների զեղծումներից, ամենևին թոյլ չը տալ յափշտակութիւններ անելու, արդարութեամբ վարվել մինչև իսկ ամենահամբաւաւոր պահանջողականների հետ. ամրացնել Մազանդարան, Թալըշ և Թէհրան տանող ճանապարհները, իսկ կարելոյն չափ շուտով սկսել զօրաշարժը դէպի Թէհրան, տիրել Ղազվինը և յատուկ մարդիկ ուղարկել Արդաբիլ, Աստարա և Խալխալ՝ օգնութեան հրաւիրելու նրանց: Բողոքներկայացրէք հիւպատոսարանին կառավարչական փոխառութեան և օտարերկրացիներին կօնցեսսիաներ տալու դէմ, ամեն միջոցներ ձեռք առէք օտարահպատակների կեանքն ու գոյքը, նմանապէս և նրանց առևտրական շահերը պաշտպանելու համար: Աշխատեցէք ամենևին չը միջամտել ժաքսային գործերին, ձեռք չը տալ ուղարկվող ծրարներին, և չը կանգնեցնել օտարերկրեայ պօստը: Նպատակին և յաղթութեան հասնելու ամենալաւ միջոցն է՝ ունենալ անկուն կամք և վարվել արդարութեամբ: Ի բոլոր սրտէ աջողութիւն իմ ցանկանում բոլոր մուջահիդներին (սահմանադրականներին) ճշմարտութեան և ազատութեան շաւղում: Թաղի Զադէ»:

Բաշտում լոյս տեսնող պարսկական «Նասիմ Շիմալ» լրագիրը հաղորդում է Թէհրանի և ապստամբված Բաշտի միջև տեղի ունեցած ընորոշ վարչական գրագրութեան շարունակութիւնը:

Երբ Գիլանի նոր նշանակված գեներալ-նահանգապետ սիփեհդար Ազամը Բաշտ հասնելուն պէս իրան յայտարարեց սահմանադրութեան կողմնակից, շահի մինիստրները տեղական ազգաբնակութեանը ուղարկեցին մի հեռագիր, յայտարարելով որ սիփեհդարը կառավարութիւնից լիազօրութիւն չունի կառավարելու Գիլանը և առաջարկելով հոգևորականութեանը և Գիլանի ազգաբնակութեան բարձր և ստորին խաւերին՝ խաղաղ լինել, հեռու մնալ ապստամբութիւնից և նահանգապետ չը ճանաչել սիփեհդարին, որպէսզի երկիրը քաղաքացի չը լինի և հպատակները չը տուժեն իրանց կեանքով ու գոյքով:

Այդ հեռագրին Գիլանի գեներալ-նահանգապետը պատասխանել է այսպէս.

«Արդարադատութեան պալատի մեծ մինիստրներին.

«Ձեր հեռագիրը կարդացվեց տեղական բնակիչներին: Ես էլ կարդացի ու շատ ափսոսացի, նկատելով թէ որչափ դուք, ընդունակ մարդիկդ, դիտմամբ հիասթափութիւն էք պատճառում ժողովրդին և ապըստամբութեան դրդում: Նախ՝ հանգուցեալ սարդար Աֆհամը, որ վարժվել էր դրամները կլանել, վաղուց արդէն հաւաքել է ամբողջ հարկը և վատնել թալըշիցիների դէմ պատերազմելու գործի վրա: Ապառիկներ էլ չէ պահել իրանից յետոյ, որ յարգելի մինիստրները յոյս ունենային ստանալ և ծախսել Թաւրիզի ու Սպահանի դէմ պատերազմելու գործի վրա: Բացի դրանից հոգևորականութեան ներկայացուցիչների և մարդաբէի փոխանորդների հրամանի համաձայն արգելված է վճարել ձեզ հարկերը: Մթթէ այդ բոլոր խօսքերը դուք կատակի և խաղալիքի տեղ էք ընդունում: Ամօթ չէ՞ ձեզ համար այդ տեսակ հեռագիրներ տալ: Ուզում էք, արդեօք, ցոյց տալ ուրիշներին՝ որչափ խոհեմ էք դուք, թէ՞ ուզում էք փորձել ժողովրդի մտաւոր զարգացման աստիճանը: Թշնամիներ չէ՞ք դուք թագաւորական հարստութեան, որ այդպիսի ճանապարհ էք ցոյց տալիս նորին տնօրէութեան շահն-շահին և ձեր թագակիր հօրը՝ որ բոլոր հպատակների հայրն է: Այդ հպատակները ասում են և զեկուցանում իրանց շահին ու թագակիր հօրը, որ «մենք, ժողովուրդը և իր կառավարութիւնը, բարձր չենք կանգնած անգլիացիներից ու անգլիական կառավարութիւնից: Մեր թագաւորը նոյնպէս բարձր չէ անգլիական թագաւորից: Տեսէք ինչպէս և ինչ օրէնքներով է այն թագաւորը և այն հայրը վարվում իր ժողովրդի ու իր որդիների հետ և ինչպէս հնազանդվում են նրան իր այդ որդիները, այդպէս էլ դուք մեզ հետ վարվեցէք: Եթէ նրանք սահմանադրութիւն ունեն, տուէք նոյնը մեզ. եթէ նրանք պարլամենտ ունեն, թող որ մենք էլ ունենանք. եթէ նրանցում կան օրէնքներ կարգ պահպանելու և դիսցիպլինայի համար, մեզ էլ տուէք օրէնքներ: Մինչև այժմ մենք օրէնքներ չենք ունեցել: Ցոյց տուէք, թէ ինչ օգուտ ենք ստացել դրանից, և այն ժամանակ, եթէ խելօք մարդիկ կը պնդեն օրէնք չունենալու գերադասելութեան վրա, մենք կը հնազանդվենք մեծ մինիստրների այդօրինակ կարգադրութիւններին»: Ահա թէ ինչ է ասում ժողովուրդը:

«Իսկ ես, ծառայելով իմ առաքինի թագաւորին, հեռևեալն եմ զեկուցանում. «Մի պայրանաք ձեր հպատակների վրա, կատարեցէք նրանց խնդիրքը և մեր միջնորդութիւնը. իսկ դուք, մեծ մինիստրներ, թողէք ձեր սպառնալիքները, մեզ նման դուք էլ խնդրեցէք, այլ ոչ թէ աշխատեցէք աւելի շատ քանդելու և խորտակելու երկիրը և ժողովրդին: Բայց եթէ չէք կարող այդ անել, գնացէք ձեր տները և մի խառնվէք գործերին, որպէսզի թագաւորը սեփական խելքով ու մտքով ընդունէ ժողովրդի խնդիրքը և պահպանէ հոգևորականութեան ներկայացուցիչների սրբազան խօսքերի վարկը յանուն ընդհանուր ազգա-

յին բարեկեցութեան։ Ապա թէ ոչ՝ մեծ մի-նիստրների այդօրինակ հրամանները միայն իբրև ծաղր են ծառայում Իրանի բնակիչ-ներից շատերի համար, ուստի և աւելի լաւ կը լինէր, որ լռէիք»։

Մահմէդ-Վալի» (սիփեհդարի անունը)։

(«Р. В.»)

—

Ղօչան, 17 մարտի

Ամսիս 10-ին ամբողջ օրը քաղաքս իրա-րանցման մէջ էր. ինչպէս տեղեկացանք, տե-ղիս դատաւոր Սուլթան-էդ-Դօվլէն այդ օրը իր յայտարարութիւններով կոչ է անում ազգաբնակութեան, որ ռաբիւլ-աւալ ամսի 9-ին ժողով անելով՝ անջոմանի անդամներ ընտրելով՝ անջոմանի հաստատեն։

Այս անակնկալ լուրը ականջիս հասնելուն պէս, ես չը հաւատալով նոյնիսկ իմ ա-կանջներին, անձամբ գնացի յայտարարու-թիւնը կարդալու։ Բարեբաղդաբար լուրը ճշդւում է։ Յայտարարութեան մէջ ի միջի այլոց այսպէս է գրված. «Ցանուն սահմա-նադրութեան ես էլ ձեզ հետ պատրաստ եմ մինչև վերջին կաթիլ արիւնս թափելու»։

Մեզ համար սա հանելուկ է մնում. ինչ է նշանակում. անցեալներում միապետա-կան սկզբունքներին ջերմ պաշտպան Սուլ-թան-էդ-Դօվլէն այսօր ինքն է սահմանադ-րութիւն պարգևում ժողովրդին. հաստատ համոզված ենք, որ դատաւորի քայլերն ա-ռանց ներքին նպատակների չեն։ Երևի աչ-քի առաջ ունենալով ներկայիս Մէշէդի սահմանադրականների բռնած դիրքը, ինքն էլ իր «կաշուից» է վախենում, կամ կամե-նում է հաստատ տեղեկանալ իսկական մաշ-րութա-թալաբներին, որ յետոյ մէկ-մէկ ձերբակալէ։ Թէ առաջինը և թէ երկրորդը մեզ համար մութ են, ժամիկ ապագայում կը պարզվի ամեն ինչ։ Երևի դեռ նոր ա-նակնկալների նախօրեակին ենք։

Մէշէդից նոր ստոյգ տեղեկութիւններ չը կան. շարունակ հակասողական լուրեր ենք ստանում. շատերի ասելով անջոմանը արդէն հաստատված է՝ գործում է։

Նախընթաց նամակով ինչպէս գրել էի, որ Մէշէդից Ասխաբադ ուղևորված կառա-վարութեան պօստը ճանապարհին կողոպտ-ված է, ինչպէս հաստատ տեղեկացանք, շնորհիւ կառավարութեան ձեռք առած եռանդուն միջոցների՝ աւազակները ձեր-բակալված են և բանտարկված. ոմանց ա-սելով երեքին էլ գլխատելու են։

Սրտի անհուն բերկրանքով պիտի ար-ձանագրենք, որ նման կողոպուտներ շատ հազագիւտ են պատահում այս միջավայ-րում, եղածներն էլ իսկոյն և եթ գտնվում և իրանց արժանի պատիժն են ստանում։

Եէլիբէգ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻԱՑԻՑ *)

—

Կ. Պոլիս, 12 մարտի

Երեսփոխանական ընդհ. ժողով էր գու-մարված. վերաքննվում էր հռօմէական հա-յերի յատուկ սահմանադրութիւնը. վիճա-բանութիւններ կատարում էին բաբելօնա-կան խառնակաբանութեամբ, կէս հայերէն, կէս թիւրքերէն միանգամայն. երբ հասաւ այն կէտը թէ՝ հայ-հռօմէական պատրիարքական աթոռի ընտրելութեան մէջ հմարկ էր Մխիթա-րեանց, Անտոնեանց վարդապետներին էլ իրա-ւունք տալ, թէ ոչ, յանկարծ մի բուռն ժիր է թռնում, ըղաւուններ, գոռումներ, գոչում-ներ այնչափ սաստիկ, որ մարդ մարդի խօսք չէր իմանում։ Աշխարհիկ-կղերական դասին պատկանող մի քանի տգէտ վար-դապետներ լկտի յարձակումներ սկսեցին տեղալ Մխիթարեան և Անտոնեան միա-բանութիւնների դէմ, ապօրինական, անվա-յել համարեցին Աթոռի իրաւունք տալ նը-ցանց. «Մխիթարեանք շատ հայեն,—ասում էին,—չըլլար», կրկնում էին, իբրև թէ իրանք հայ չը լինէին. բայց ահա ժողովրդական երես-փոխանների ձայնը, բողոքի արդար ձայնը բարձրանում է և միևնոյն ժամանակ ջախ-ջախիչ փաստերով յարձակումներ է տեղաց-նում յարձակումների դէմ և տապալում տգիտութեան դրօշակակիր կղերին։

Երեսփոխանները պատմական կուռ փաս-տերով ցոյց են տալիս, թէ որչափ օգ-տակար են հանդիսացել Անտոնեանցներից և Վիէննական Մխիթարեանցներից հին ժամանակներում կարված պատրիարքներ, թէ որչափ ազդօրաւոր ձեռնարկների հայր են եղել նրանք։ Երկար վիճաբանութիւնն-երից յետոյ այդ երեսփոխանները աջող են հանդիսանում յաղթութեան նժարին թեքել դէպի Մխիթարեանները և Անտոնեանները, և ահա որոնդոստ ծափահարութիւնն-երով ընդունում են օրէնքում՝ թէ սրանից յետոյ Մխիթարեան և Անտոնեան միաբա-նութիւնների վարդապետներին էլ իրա-ւունք է լինել ընտրելի Կ. Պոլսի հայ-կա-թոլիկ պատրիարքական աթոռին։

Կուից յետոյ յաղթութեան աջող արդիւն-քը որչափ սփոփարար է, որչափ սրտապնդ-էր։ Մաղթելի է, որ սահմանադրութեան միւս յօդուածների քննումն էլ շուտով վերջ գտնի և հայ-կաթոլիկ հասարակութիւն ու-նենայ իր սահմանադիր օրէնքները. բայց այս կէտի իրականութիւնը շատ յուսալի չէ երևում, որովհետև Մխիթարեան և Անտո-նեանց մասին տրված որոշումը շատ դիւր չէ եկել կ.-պատրիարք Սապպաղեանին, որ ժողովում թէև իբրև շնչուն արձան նստած՝ ասել է իր ժամիկ բազմող մի վարդապետի, թէ սահմանադրութեան վաւերացումի կա-տարումը սրանով վախենում է թէ ջուրն ընկնի։

Սապպաղեանի չարագուշակութեան դէմ կը խորհվի անշուշտ յետոյ. առ այժմ պօլսա-հայ կաթոլիկները առաջադիմութեան մի մեծ քայլ են արել և դա մեծապէս ուրա-խառիթ է։

Ազգ. ընդհ. ժողովը՝ որը գումարվեց փետրվարի 27-ին, նախագահութեամբ նո-ր.ընտիր տեղապահ Արշարունի սրբազանի՝ մեծ գործ չէ ունեցել. լուծեց սակայն (ոչ նուազ մեծ քուէներով) մեծամասնութեան հարցը։ Վճռեց 71 երեսփոխանների ներ-կայութիւնը պահանջող օրէնական կէտը անխախտ պահել. 71 թիւը նուիրագործ-վեց ազգ. ժողովում, և հէնց միւս օրն և եթ Կ. Պոլսի գիշերային աւազակները այդ թիւն սիրահարվեցին։ Գիշերային գողերը թռուցիկներով պահանջել են, որպէսզի տա-նից դուրս եկողները բարեհաճեն գիշերը իրանց գրպանում ունենալ 71 դահեկան, պակաս ունեցողին սպառնում են կտրել ականջները. և մի՞թէ մեր 71 թուի յարգը չէ՞ մեծացնում այս։

Ահա Կ. Պոլսի հայ հասայնքի այս ան-գամի լուրերը, որոնք շատ հեռու են ու-րախառիթ լինելուց. մխիթարական է գոնէ որ ընկերութիւններ գործում են անշշուկ, գործում են մեզուի պէս, Մխայեալ Դպրո-ցասէր տիկնանցը, Հայուհեացը և ուրիշներ։

Այժմ ձեռնարկված է բանալ Աշխատանքի տուն, նաև հասարակական գիտութիւնների համար ժողովրդական դասարան. երկուսն էլ այժմեանից իսկ յարատևութեան յոյսեր են ներշնչում, որովհետև կովկասահայի ոյժե-րով է որ դրանք սկիզբ են առել։ Թուքակ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

—

Գոյութիւն ունեցող որոշումների հիման վրա, առաջարկում եմ ոստիկանական ան-դամներին հսկել.

1) Որպէսզի այս մարտի 27-ին բոլոր գինետները և խմիչքավաճառանոցները փակված լինեն ամբողջ օրը։

2) Որպէսզի շաբաթ, մարտի 28-ին, բոլոր գինետները և խմիչքավաճառանոցները փակվեն ամբողջ օրը։

3) Որպէսզի Զատկի առաջին օրը, այ-սինքն մարտի 29-ին, բոլոր գինետները փակվեն ամբողջ օրը։

4) Որպէսզի Զատկի 2-րդ և 3-րդ օրերը, այսինքն երկուշաբթի և երեքշաբթի, գի-նետները և խմիչքավաճառանոցները բաց-վեն՝ տեղական եկեղեցիներում պատարագը վերջանալուց ոչ շուտ և փակվեն ոչ ուշ, քան երեկոյեան ժամը 6-ին։

Խմիչքներ վաճառելու ժամանակի այս սահմանափակումը չէ տարածվում միայն հիւրանոցների, երկաթուղային բուֆէտների, և պանդոկների վրա, որոնք կարող են առևտուրը շարունակել։ Բոլոր առևտրական-արդիւնաբերական հաստատութիւնները և արհեստանոցները բոլոր երեք օրե-րում, այսինքն կիրակի, երկուշաբթի և երեքշաբթի, պէտք է փակված լի-նեն և աշխատանք չը պէտք է լինի ա-ռանց դաւանանքի խտրութեան, ինչպէս տէրերի, այնպէս և բանուորների համար։

Ընդ սմին նախազգուշացնել տրակտիր-ների և գինետների տէրերին, որ նրանց խանութներում եթէ հարբածներ երևան, կամ խմիչքներ վաճառվի զինուորներին ու-անչափահասներին, իրանք կենթարկվեն խիստ պատասխանատուութեան։ Զատկի ա-ռաջին օրը ոչ մի ներկայացում, զուարճու-թիւն և ժողովրդական զբօսանքներ չեն թոյլատրվում։ Թատրոնները և միւս զուար-ճատեղիները կարող են բացվել հետևեալ օրվանից։

Ստորագրեց՝ Թիֆլիսի ոստիկանապետ

Գնդապետ Զասիպկին

Վ. ՏՈՏՈՄԵԱՆՑԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

V

Կօօպերացիայի մասին

Նախորդ դասախօսութիւնների մէջ յիշած կօօպերատիվ ընկերութիւնների շարքը մարտի 22-ին դասախօսը շարունակեց լրաց-նել նորերով՝ ինչպէս վուշի կօօպերատիվ ընկերութիւնը, որի տարածումը մասնաւո-րապէս Ռուսաստանի համար մեծ կարևո-րութիւն ունի։ Իրլանդիայում կաթնատնտ-եսական և բանջարեղէնի ընկերութիւն-ների հետ միասին գիւղերում տարածված են նաև վուշի ընկերութիւնները։ Ներկա-յումս այդ տեսակ գիւղատնտեսական ընկե-րութիւնների թիւը հասնում է 950-ի 100,000 անդամներով, որոնք բարձրացրին իրլանդական գիւղացու թէ մնտեսական, թէ կրթական ու մտաւոր վիճակը, վերաց-րին նրա միջից մնոտիապաշտութիւնը, տա-վորեցրին նրան յոյս դնել իր գիտակցական գործունէութեան, կօօպերացիայի և գիտու-թեան վրա, դարձրին նրա բնաւորութիւնը վստահացող, հաւերաշխ, բարոյական։

Նոյն երևոյթը նկատվում է նաև Դանիա-յում։ Եթէ այսօր դանիացի գիւղացին ա-մենաառաջադէմն է եւրօպական գիւղացիու-թեան մէջ, դա արդիւնք է կօօպերացիայի շարժման. նա բարձրացնելով նրա նիւթա-կանը՝ բարձրացրել է նաև բարոյականը։

Կօօպերացիաները, ինչպէս յիշված էր նաև նախորդ անգամ, լինում են զանազան տեսակ՝ համաձայն իրանց արտադրութեան, իսկ նպատակը, համարեա, ամենքի համար էլ միևնոյնն է. բարձրացնել ոչ միայն նիւ-թականը, այլ և մտաւորն ու հոգևորը, ստեղծելով երիտասարդ կօօպերատիվ սե-րունդ յօգուտ ամբողջ համայնքի։

Թէ որքան նշանակութիւն է տրվում այդ ճիւղին, երևում է նրանից, որ Գերմանիայի Դարմշտատ քաղաքում բացված է յատուկ կօօպերատիվ ընկերութիւնների դպրոց, որ-տեղից դուրս են գալիս գիւղատնտեսներ, կառավարիչներ, կօօպերատօրներ, կօօպե-ռացիայի շրջիկ դասախօսներ ու ագիտա-տօրներ, որոնք սկիզբներում աշխատում են ամսական 70 ռուբլի ապրուստ։

Զարմանալի կարևոր նշանակութիւն է տալիս դասախօսը նաև վարկային կօօ-պերացիային, փոխատու-խնայողական ընկերութիւններին։

Առաջինը, այսինքն վարկայինը, որ գոր-ծում է աւելի փոքրիկ շրջանում, միջոց է տալիս գիւղացիներին կանոնաւորապէս տանելու իրանց տնտեսութիւնը և դուրս բերելու իրանց թողնում նրանց միմիայն արդիւնա-բերական նպատակով։

Ռուսաստանում, յատկապէս Կուրանի շրջանում, գիւղական հացատուիկների վա-ճառման ֆունկցիաները միացված են վար-կայինի հետ։ Դրա շնորհիւ նախ՝ գիւղա-ցիներն են ազատվում պարզիտ միջնորդ-ներից, և երկրորդ ազդում են հացի տե-սակների լաւացման վրա։

Երկրորդը, այսինքն փոխատու խնայողա-կան ընկերութիւնները (ссудо-сберегат.) գործում են աւելի ընդարձակ շրջաններում, (Գերմանիայում, Իտալիայում), գլխաւորա-պէս քաղաքներում՝ արհեստաւորների հա-մար։

Առաջին անգամ այդ տեսակ ընկերու-թիւնները զբաղվեց Շուլց Դէյլիչը, մէկը գերմանական պարլամենտական այն ան-դամներից, որոնք 1848 թուականին, մեր ա-ռաջին Դումայի անդամների նման, ստո-բագրեցին պարլամենտի անունից ժողովը-դին ուղղված կոչը՝ հարկ չը տալ կառա-վարութեան։

Այդպիսով փոխատու-խնայողական ընկե-րութիւնների ստեղծման պատիւը վերաբե-րում է Գերմանիային և նա տարածված է ամենուրեք, բացի Անգլիայից, ուր գոր-ծում են աջողութեամբ սպառողական ըն-կերութիւնները։

Իտալիայում շատ տարածված է Բայֆայ-զէնի վարկային կօօպերացիայի սիստեմը։ Վերջինս մանաւանդ մեծ ծաւալ է ստանում Եապոնիայում. 1901 թէին այնտեղ կար 190 վարկ. ընկերութիւն, մինչդեռ ներկա-յումս անցնում է 1500-ից։

Կօօպերատիվ ընկերութիւնները վերին աստիճանի ուշագրաւ արդիւնքներ էլ տուե-ցին. նրանք պակասեցրին անտիսեմիտիզմը Գերմանիայում։ Դա իսկապէս մի արմա-տական միջոց է՝ հիմնված միայն ազատ մրցման վրա, որով սանձ է դրվում առևտ-սարակ վաշխառուների բերնին, մանաւանդ հրէաների։

Իտալիայում եթէ անտիսեմիտիզմ չը կայ գիւղացիութեան մէջ, դասախօսի ասելով, դա պարտական է կօօպերացիաներին, որի մէջ ոչ պակաս եռանդով մասնակցում են հրէայ հարուստները, մինչդեռ ուրիշ երկիրներում աշխատում են խանգարել։ Ի-տալիայում հարուստ հրէայ վաճառական Լօրիան Նոյնիսկ նուիրեց իր ամբողջ կա-ղդութիւնը կօօպերացիայի զարգացման գործին, ստեղծելով Հումանիտար Ֆօնդ։ Այդ Հումանիտարը անագին ծառայութիւն է մա-տուցանում այսօր Իտալիայի ժողովրդին, բանալով պրոֆեսիոնալ դպրոցներ, տարա-ծելով գրագիտութիւն, գիւղատնտեսական և կօօպերատիվ գիտելիքներ, կազմակերպե-լով շարժական դպրոցներ, տալով շրջիկ դասախօսներ, հիմնելով կաֆեդրաներ, դրամական փոխառութեամբ հողեր առնե-լով անհող գիւղացիների համար ու միաց-նելով նրանց կօօպ'ըրաց'ոյի հիման վրա։ Բացի դրանից Հումանիտարիան նպաստում է նաև գիւղական գործուածքներով պարապ-ողներին (ոստայնանկներին)։ Իտալիայում, Ռուսաստանի նման, աշխատանքներից ա-զատ ժամանակը պարապում են ձեռա-ռուեստ գործուածքներով։ Ներկայումս շնոր-հիւ Հումանիտարի Լոմբարդիայում այլևս մանրում չեն աշխատում, այլ պարապում են մի յատուկ, ընդհանուր արհեստանոցում։ Եւ տնայնագործութիւնը դադարում է տնա-յին լինելուց, դառնում է կօօպերատիվ։

Հումանիտարիան նպատակ է դրել հիմնել արդիւնաբերական կազմակերպութիւններ։ Այդ կազմակերպութիւնները քաղաքներում և գիւղերում տարբեր են լինում։ Արդիւ-նաբերականները աջողվում են գիւղերում, իսկ քաղաքներում սպառողական ճանա-պարհը բանուորներին դանդաղ է թուում, ուստի՝ նրանք դիմում են արդիւնաբերա-կանին՝ հիմնում են արտելներ (ինչպէս Ռուսաստանում), գործարաններ և այլն, իբրև արագութեամբ նպատակի հասցնող, բայց դա սխալ է, որովհետև այնտեղ նրանք մրցութեան չեն կարողանում դիմանալ։

Այդպիսով զանազան պայմանների շնոր-հիւ կօօպերատիվ կազմակերպութիւն-ները քաղաքներում չեն աջողվում այնպէս, ինչպէս գիւղերում։ Գիւղերում նրանց ա-նաջողութիւնների պատճառը պէտք է որո-նել ժողովրդի գիտակցութեան պակասու-թեան, անպարտաճանաչութեան և անհա-մերաշխութեան, կասկածոտութեան մէջ։

Մեզանում այդպիսի օրինակ նորերս տուեց Բագուն, ուր բանուորները կօօպերա-տիվ հիմունքներով վերցրել և շահագործում էին մի գործարան, սկզբում բաւակա-նին լաւ, բայց յետոյ բանուորների անկուլ-տուրականութիւնը և ներքին ինտրիգները տապալեցին այդ գործը։

Դրա հակառակ՝ գործին ազնիւ կերպով նուիրված մարդկանց շնորհիւ արդիւնաբե-րական ընկերութիւնները աջողութիւն են գտնում, օրինակ Ֆրանսիայում Գօդէնի ապա-կեգործարանը, որ արդէն բանուորների սեփականութիւն է դառել։

Առհասարակ վերջերս գործարանական աշխարհում, գլխաւորապէս Անգլիայում, ձգտումն է նկատվում բանուորներին մաս-նակից անել արդիւնաբերական գործին՝ թէ օգտին և թէ սեփականութեանը։ Դրա-նով նախ թուլանում է դասակարգային կռիւը, երկրորդ՝ որ վերջ ի վերջոյ այդ մասնակցութիւնը դուրս է վանում արդիւ-նաբերական ընկերութիւններից գործարա-նատէրերին։

Արդիւնաբերական միութիւնների տա-բաժման պատճառը Իտալիայում կայի-տալի թոյլ զարգացումն է։ Այնտեղ բան-ուորական միութիւնների ֆեդերացիան ձեռ-նարկել է արդէն արտելների ու գործա-րանների կազմակերպումին. առաջին օրի-նակը՝ Պիզա քաղաքում բացված ապակէ-գործարանն է (1907 թէին), որը այժմ երկրորդ տեղն է բռնում։

Արդիւնաբերական ընկերութիւններից յարգելի դասախօսը անցաւ կօօպերա-ցիայի շարժման մի բոլորովին նորագոյն ձևին։ Առհասարակ պէտք է նկատել, որ այդ շարժումը կանանց շնորհիւ աւելի մեծ ծաւալ է ստանում. մի շարք զբաղ կօօպերացիայի մասին գրել են անգլիացի և գերմանացի կանայք։ Կրեմանիի վերջին միջազգային համագումարին (կօօպերացիայի) մասնակ-ցող 1000 ներկայացուցիչների մէջ աչքի ընկնող տեղ էին գրաւել կին ներկայացու-ցիչները։

Այդ նորագոյն ձևը կամ կազմակերպու-թիւնը կոչվում է սպառողուհիների լիգա, որ վերջերս կազմակերպվել է Ամերիկա-յում։ Դրա ծագումը հետևեալն է մի շարք հարուստ տիկիններ, ձանձրացած բարեգոր-ծական գործունէութիւնից, նպատակ են դրել ազդել աշխատանքի պայմանների վրա, գլխաւորապէս՝ կին աշխատաւորների դրու-թիւնը թեթևացնելու համար։ Նրանք այս-պէս ասած բոյկոտի են ենթարկում այն արհեստանոցները և կանդիտերները, որոնք չեն բարելաւում իրանց աշխատաւորների վիճակը, և գնում են իրանց հարկաւոր իրերը կամ պատուէրներ են տալիս իրանց ցուցակի մէջ մտած ֆիրմաներին։ Շնորհիւ այդ լիգայի՝ գործակատարների վիճակը այնտեղ թեթևանում է արագութեամբ։

Այդ միջոցը կարելի է յանձնարարել մեր այն բարեգործ տիկինների ուշադրութեանը, որոնք չը գիտեն ինչպէս գործադրել իրանց եռանդը։

Հեգնաբար ու բացասաբար չը պէտք է վերաբերվել բուրժուազուհիների այդ գոր-ծունէութեանը, որովհետև նրանք անկաս-կած օգուտ են բերում աշխատաւորուհի-ներին։

Այդ լիգաները նոյնիսկ նորերս միջազ-գային համագումար կազմակերպեցին և դրանով սկսեցին ազդել արտասահմանեան կանանց վրա։

Այնուհետև դասախօսը յիշեց նաև մի շարք ուրիշ կազմակերպութիւնների, ամարա-նոց-կուրորտների մասին, որոնք նպատակ ունեն ծառայելու աղքատ ինտելիգենտնե-րին։

Վերջում խօսելով կօօպերատիվ շարժման մասին Ռուսաստանում՝ յարգելի դասախօսը յիշատակեց նրանց զանազան տեսակները և մատնանշեց, որ կօօպերատիվ ընկերու-թիւնները մեզանում սկսեցին տարածվել Ռու-սաստանի յեղափոխութիւնից յետոյ (հիաս-թափութեան արդիւնք), գլխաւորապէս գիւ-ղական ուսուցիչների նախաձեռնութեամբ։ Նրանք արագ կերպով չեն զարգանում ինտելիգենտ ոյժերի պակասութեան շնորհիւ։

Անցեալ տարվայ համագումարը Մոսկվա-յում, որին մասնակցում էին Ռուսաստանի զանազան ծայրերից եկած գիւղացիներ, յոյս ներշնչեց կօօպերացիայի ջատագով-ներին, որ գիւղացին իր կուլտուրական առաջադիմութեան միակ փրկութիւնը տես-նում է կօօպերացիայի մէջ. ուստի պէտք է աշխատել աջակցելու նրան։

Դրանով էլ վերջացրեց իր դասախօսու-թեան սերիան։ Լ. Դ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Նոր-Բայազէտ, 16 մարտի

«Մշակը» շատ անգամ առիթ է ունեցել այն հարցը արծարծելու, որ տեղական հաշ-տարար դատաւորները պէտք է տիրապե-տեն տեղական լեզուներին, որպէսզի դատա-վարութիւնը ազատ մնայ թարգմանների աղաւաղումներից կամ նրանց անփորձու-թիւններից կամ թէ ժողովուրդը—դատվող կողմերը—չը տուժէ այս և այն թարգմա-նի ծուռ ու շիտակ թարգմանութիւնների պատճառով... «Մշակը» շատ յաճախ խօսել է նոյնպէս թարգմանների վերաբերմամբ, որոնց գործունէութեան պատկերը ոչ մի միխիթարական բան չէ տուել ժողովրդին։ Մենք այստեղ նպատակ չունենք թարգման-ների վերաբերմամբ խօսել, բայց մենք և մեզ հետ շատերը ուրախ են, երբ մի որևէ դատաստանական հիմնարկութեան մէջ ծա-ռայում են տեղական լեզուին տիրապետող կամ տեղական շրջաններին ծանօթ դատա-ւորներ։

Մասնաւորելով մեր խօսքը Նոր-Բայա-զէտի վերաբերմամբ, կարող ենք ուրա-խութեամբ արձանագրել, որ վերջապէս մեր քաղաքը ունեցաւ տեղական լեզուին տիրա-պետող թէ հաշտարար դատաւոր և թէ քննիչ. առաջինը թուրք, իսկ երկրորդը՝ հայ, նաև երիտասարդ անձինք, ստանձնե-ցին այդ պաշտօնները և մեծ աշխոյժով գործում են՝ թէ քաղաքացիական և թէ քրէական դատավարութիւնների վերաբեր-մամբ։ Պ. Կ. Քեալով քրէական գործաւոր-թեան մէջ նախնական հարցաքննութիւն-ները կատարում է ամենայն եռանդով, իսկ պ. Ա. Աղարաբ-բեկով քաղաքացիական գործերում վերին աստիճանի աշխոյժ է ցոյց տալիս. նա յաճախ առաւօտեան ժամը 10—11-ին արդէն իր նշանակած բոլոր գործերը (առնուազն 10 գործ) քննած և վերջացրած է լինում։ Իրրև հրիտասարդ և գործին եռանդով նուիրված անձինք մեր դատաւորները մեծ ապագայ են խոստա-նում և մենք ի սրտէ ցանկանում ենք, որ նրանց դատավարութիւնը արդարապէս ա-ռաջ տարվի և ըստ արժանոյն գնահատվի գաւառական ամբողջ ազգաբնակութեան կողմից։

Ի դէպ մի տարի սրանից առաջ այստեղ վախճանվեց մեր նախկին հաշտարար դա-տաւոր Ն. Կազանսկին, որը մօտ 20 տարի պաշտօնավարում էր մեր քաղաքում։ Հան-գուցեալը մինչև խորին ծերութիւն, քըրա-նաչան կերպով աշխատելով, յետ չէր մնում անթերի կերպով վարելու մեր գաւառի ամ-բողջ դատաստանական գործերը (մօտ 80 գիւղերի), որոնք այն աստիճան բազմաթիւ էին, որ միայն վերջին 3—4 տարում կա-րիք զգացվեց դատել գաւառիցս մի փոքր մաս (այն էլ տեղ. ազգաբնակութեանը գիւրութիւն տալու նպատակով) և հիմնել մի օգնական հաշտարար շրջան (Слѣдственно-Мировой участокъ) Բասարգեչարում։ Պէտք է աւելացնել, որ հանգուցեալ Կա-զանսկու ամենագլխաւոր յատկութիւններից մէկն էլ այն էր, որ նա մօտ չէր ոչ ոքի և ոչ մի յարաբերութիւն չէր պահպանում ոչ մի չինովնիկի, ոչ մի պաշտօնեայի և դատ-վող կողմերի հետ, ովքեր էլ որ լինէին նրանք։ Դա ուղղակի մի բացառութիւն է մեր դատաստանական գործավարութեան տարեգրութեան մէջ։ Եւ հէնց այդ հանգա-մանքները գալիս են մեզ հաստատելու, որ հանգուցեալ Կազանսկու դատավարութիւնը արդար էր, շիտակ և առանց կողմնապա-հութեան։ Այդ իսկ տեսակէտից ցանկալի էր, որ մեր քաղաքի դատաս. նոր պաշտօ-նեաները այդ նոյն պարագաներում առաջ տանէին իրանց դատավարութեան գոր-ծառնութիւնները։ Ս. Ե. Ա.

ԴՕԳՕԼԵԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ

—

Գօրի, 21 մարտի

Մարտի 20-ին Գօրու արական պրօգիմ-նազիայի դահլիճում տեղի ունեցաւ գրա-կան-երաժշտական ցերեկոյթ Ն. Վ. Գօգօլի հարիւրամեայ տարեդարձի առիթով։ Այդ օրը Գօրու ռուս, հայ և վրացի դպրոցները առանց բացառութեան դասաւորութիւնը դադարեցրել էին։ Հանդէս կազմակերպող-ներն էին Գօրու արական պրօգիմնազիան, իգական գիմնազիան, ուսուցչական սեմի-նարիան և քաղաքային դպրոցը։ Դահլիճի շքեղ ճակատում, ամբիոնին կից բարձրա-նում էր Գօգօլի յուշարձանը գոյնզգոյն թարմ ծաղիկներով և անթիւ պսակներով զարդարված։ Հանդէսի ծրագիրը ճոխ էր և խնամքով պատրաստված։ Սեմինարիայի երկու սանները արտասանեցին ինքնուրոյն ոտանաւորներ նուիրված մեծ գրողի տա-ղանդաւորութեանը. ճառախօսներից նախ կար-դաց սեմինարիայի ուսուցիչ Կարպով՝ «Գօ-գօլի գրական գործունէութիւնը և անձնա-ւորութեան գնահատութիւնը», որը ընդուն-վեց ծափահարութիւններով. ապա գիմնա-զիայի ուսուցիչ Լաբաչեվսկին կարդաց մի լուրջ ուսումնասիրութիւն Գօգօլի անհատա-կան ընդարձակութեան յատկութեան և վեր-ջինիս ստեղծագործութեան աստիճանական զարգացման մասին՝ շաղկապված նրա հետա-քրքրաշարժ կենսագրութեան հետ, որը ըն-դունվեց ծափահարութիւններով. աշակերտ-աշակերտուհիները արտասանեցին օրվայ պատշաճ հատուածներ և ներկայացրին աջող տեսարաններ Գօգօլի երկերից, ինչ-պէս և՝ «Տարաս Բուլբայից», «Ամուսնութիւ-նից», «Мертвыя душъ»-ից և այլն. մէջ ընդ մէջ երգում էր փոքրաքոր և շնորհալի խմբ-բապետ Սիմոն Գօգլիշիձէի ղեկավարու-թեամբ երգեցիկ երկսեռ քառաձայն խումբը մի շարք ռուս ժողովրդական երգեր. խում-բը երգում էր ներդաշնակ և միշտ էլ ըն-դունվում էր բուռն ծափահարութիւններով և կրկնութիւններով։ Հանդէսին նուագում էր սեմինարիայի և քաղաքային դպրոցների աշակերտներից կազմված միացեալ օրկեստ-ը։ Առհասարակ ամբողջ հանդէսը անցաւ շատ աջող և լաւ տպաւորութիւն թողց հանդիսականների վրա։ Հանդէսին բացա-ռապէս հրաւիրված և ներկայ էին զանա-զան հիմնարկութիւնների միայն ներկայա-ցուցիչները։ հանդէսը սկսվեց ժամը 12-ին և վերջացաւ 4½-ին կեցցէներով և ծափա-հարութիւններով։ Կ. Օրբէլեանց

*) Տես «Մշակ» № 62.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Շամախի, 17 մարտի

Այսօր Բաքուի նահանգական դատարանի ճիւղը, որը մի քանի գործեր քննելու համար այս ամիս Շամախի է եկած, քննեց մի հետաքրքրական գործ, որին հասարակութիւնը, առանց ազգի խտրութեան, հետաքրքրութեամբ սպասում էր։

Քաղաքի աչքի ընկնող վաճառական Նիկողայոս Թառայեանը իր խանութում հանգիստ նստած, լսում է, որ մէկը փողոցում հայհոյանքների տարափ է թափում իր հասցէին. դուրս գալով խանութից տեսնում է գինեվաճառ համաքաղաքացի Քոչարեանի որդին է, հարբած գրութեան մէջ. ուստի առանց պատասխանելու մըտնում է խանութ և ապակեայ դուռը ծածկում։ Հարբածի ձայնի վրա հաւաքվում են պարապ շամախեցիք և զուարճանում հայհոյողի յիշոցներից, որը, աւելի ոգևորված, հրամայում է իր փոքր եղբօրը՝ ասելով. «Այրա, մտի նես, աս շան որթիին սատկացրու, փորը թափի...»։ Իրանից ոչ պակաս եղբայրը «բէհութ» կոչված դաշոյնը մերկացրած յարձակվում է խանութի վրա, դուռը բացում և մտնելով խանութ ուզում է Թառայեանին խփել։ Վերջինս տեսնելով, որ անտեղի կերպով պիտի սպանվի, առաջարճանակի մի գնդակով սպանում է յարձակվողին։

Դատարանը, լսելով մի շարք քաղաքացիների ցուցմունքը, արդարացրեց Թառայեանին, չը նայելով որ ոչ մի պաշտպան չունէր։ Քոչարեանի հրաման տուող որդին, որի եղբայրը սպանվել էր, գաւառապետի կարգադրութեամբ բանտարկված է անցեալ տարվանից՝ ինչպէս վերոյիշեալ գործի, նոյնպէս և մի այլ սպանութեան պատճառով։ Բանտարկվածին պաշտպանում էր երդ.-հաւ. Տէր-Ստեփանեանը, որը անկարող եղաւ պաշտպանել և դատարանը 1½ տարի բանտ վճռեց։

Առհասարակ Շամախու մէկ ու կէս հայ բնակչութեան մէջ այդպիսի դէպքեր տեղի չեն ունեցել երբէք. տեսնված չէ, որ հայը մարդ սպանէ, այն էլ հայը հային։ Սակայն այդ արատութիւնը շամախեցիք ստացան հայ-թուրքական կոտորածներից յետոյ։

Շամախեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Կովկասի Փոխարքայի դիւանատան կառավարիչ Ն. Պետերսոնը վերադառնալով մարտի 22-ին Պետերբուրգից՝ նոյն օրն աւէթ ներկայացաւ Փոխարքային։

✦ Կ. Գօլսում ապրիլի սկզբին մի խումբ երիտասարդ այժերի մասնակցութեամբ լոյս է տեսնելու «Նոր Հոսանք» շաբաթաթերթը, Գարեգին Կոզիկեանի (Եսայեմ) և Հրանդ Արծուիկի խմբագրութեամբ։ Այդ շաբաթաթերթը նուիրված է լինելու, առանց ազգի ու կրօնի խտրութեան, մասնաւորապէս գործաւոր դասակարգի շահերի պաշտպանութեանը։

✦ Ապրիլի սկիզբներին Տիգրան Զաւէնի խմբագրութեամբ Կ. Գօլսում լոյս է տեսնելու «Երկրի Ձայնը» շաբաթաթերթը։

✦ Մարտի 21-ին վրաց ազնվականների ընդհանուր ժողովում, մի քանի պաշտպանողական ճառերից յետոյ, 600 հազար ռուբլու փոխառութիւն կնքելու հարցը որոշվել է դրական մտքով։

✦ Վերջնականապէս որոշված է գիւղատնտեսների համագումարը Թիֆլիսում դեկտեմբեր նոյեմբերի 15-ին։

✦ Կիրակի օրը տեղի ունեցաւ Թիֆլիսի վաճառականական ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։ Հաշուից երևաց, որ ընկերութիւնը դրամագլուխ ունի 51,000 ռուբլի, իսկ պարտք գոյացել է 59,000 ռուբլի։ Վաճառականների աւագ վերընտրվեց Ա. Ն. Միլովը, օգնականներ՝ Ս. Կաֆեան և Վ. Ս. Եղիազարեան, վերատուչիչ յանձնաժողովի անդամներ՝ Ս. Պ. Յարութիւնեան, Ս. Ս. Յարութիւնեան և Ա. Սիրիկեան։

✦ Շաբաթ օրը, մարտի 21-ին տեղի ունեցաւ քաղաքային վարչութեան և ինժենէր Պոդէրնու խորհրդակցութիւնը կապարելադործված սպանդանոց հաստատելու մասին։ Սպանդանոցի վերջնական տեղը որոշվեց Նաթլուղը։

✦ Այսօր դէպի Բաքու և Տագանրօգ մեկնեցին էկսկուրսիա կատարելու նպատակով Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցի բարձր դասարանի աշակերտները։

✦ Կովկասի Հայոց Բար. Ընկ. խորհուրդը խնդրում է մեզ տպել 1908 թ. դեկտեմբերի 6-ին ընկերութեան օգտին կայացած երեկոյթ-համերգի հաշիւը, որ հետևեալն է։ Մուտք՝ տոմսակներից և կօնտրամարկաներից—1445 ր., նուէրներ և պրէմիաներ՝ կոմս Ի. Ի. և կոմսուհի Ե. Ա. Վորոնցով-Դաշկովից—200 ր., զանազան անձերից—290 ր. 45 կ., վիճակախաղից—551 ր., շամպանիայից և ծաղիկներից—309 ր. 50 կ., petits chevaux-ից—132 ր. 10 կ., տիկնիկի վիճակախաղից—19 ր. 85 կ., բուֆէտից—79 ր., ընդամենը մուտք 3026 ր. 90 կ.։ Ծախք՝ ժողովարանի դահլիճն—200 ր., երաժշտութեան (եւրօպ. և տարական)—213 ր., մարկաներ—82 ր. 90 կ., յայտարարութիւններ լրագիրներում—37 ր. 10 կ., վիճակախաղի իրեր—67 ր. 15 կ., տպագրական ծախք—44 ր. 85 կ., օրգեստի և շամպանիայի—83 ր. 74 կ., ծաղիկներ և կոտիլիօնի իրեր—133 ր. 85 կ., ոստիկանների և ծառաներին—18 ր. և մանր ծախքեր (դահլիճը զարդարելու, մշակներին և այլն)—100 ր. 3 կ., ընդամենը—1020 ր. 62 կ.։ Զուտ օգուտ—2006 ր. 28 կ.։ Խորհուրդը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը երեկոյթ-համերգի բոլոր մասնակցողներին և նուիրատուներին։

✦ Դ. Սարաջևը վրաց ազգագրական ընկերութեանը նուիրել է 200 ռուբլի։

✦ Թիֆլիսում, VI քաղաքամասում թաղական վերակացու Մօրոզովի և քաղաքապահ ոստիկանների սպանութեան պատճառով բոլոր խանութները, բացի բաղանիքներից, փակված են իշխանութեան կարգադրութեամբ։

✦ Ստացանք Արշակ Տէր-Խաչատրեանի «Եղեգնուհի» հէքեաթը, հրատ. Երևանի օգտակար գիտելիքներ տարածող ընկ., գինն է 10 կոպէկ։

✦ ԳՕՐՈՒԻ մեզ գրում են. «Թեմական առաջնորդի առաջադրութեան համաձայն, կիրակի, մարտի 22-ին, Գօրու հայոց ս. Աստուածածնի մայր եկեղեցում տեղի ունեցաւ ծխական ընդհանուր ժողով, որտեղ ձայների ճնշող մեծամասնութեամբ գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին երկու լրացուցիչ հոգաբարձուներ՝ Կ. Օրբէլեան և Կ. Աֆրիկեան»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Մարտի 23-ին 5-րդ քաղաքամասի ոստիկանական պրիստաւ Դաշկովը դիտեց բակալէյնի և կօլնիալնի խանութները և Պուշկինսկի փողոցում՝ Օհաննէս Դանիէլեանի և Նաւասարդ Դանիէլեանի խանութներում երևան հանեց, որ գատկական ալիւրը տոպրակներում պակաս է լցված. օրինակ 1 պուդանոցի մէջ պակասում է 2 ֆ., 1½ ֆունտ, իսկ 3 պուդանոց տոպրակներում—5½ ֆունտ։ Դանիէլեանները ենթարկվում են պատասխանատուութեան։

✦ Մարտի լոյս 23-ի գիշերը ձերբակալվել է ադմինիստրատիվ կարգով աքսորված Իվան Զելիձէն։

✦ Մարտի 23-ին Աւճալսկայա, Գրօզնէնսկայա և Վլադիմիրսկայա փողոցներում շուրջկալի (օրլով) ժամանակ ձերբակալվեցին անցաթուղթ չունեցող մարդիկ։

✦ Մարտի 23-ին, առ. ժամը 10-ին, Իլլարիօն Զանգիձէն, որ ծառայում է Աղա Թաթուլովի մօտ, 4 ձի տանում է Կուր գետը։ Անզգուշաբար նա ձիերով մտնում է խոր տեղը և, տարվելով ջրի հոսանքից, խեղդվում է։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

Եկատերինբուրգից «Բեկեն» լրագրին հաղորդում են, որ մարտի 10-ին տեղական նահանգական դատարանին կից գտնվող երդուեալ-հաւատարմատարների խորհրդարանն է մտել մի համեստ հագնված միջին տարիքի մարդ իրաւաբանական խորհուրդ հարցնելու նպատակով։

Այդ օրը հերթապահութիւն էր անում երդ.-հաւատարմատար Վ. Ֆ. Տիշովը։ Այցելուի և փաստաբանի միջև տեղի է ունեցել հետևեալ ուշագրաւ խօսակցութիւնը։

— Ձեր անունն ու ազգանունը։

— Խալիդով Խասին։

— Կոչումը։

— Եկատերինբուրգի գաւառի, Կարաբուլակի վոլոստի գիւղացի։

— Ինչով էք պարապում։

Առանց շփոթութեան ստրուկը անգամ երևան հանելու բթացած դէմքի վրա, կլիէնտը պատասխանում է.

— Եկել եմ բանտային դահիճ...

Խեղդելով իր մէջ այն զգացմունքները, որոնք անխուսափելիօրէն պէտք է երևան հանէին այդպիսի մի անկեղծ խոստովանութիւն, փաստաբանը խնդրում է եկորին պատմել գործի էութիւնը։

Պարզվում է, որ դահճին զրկել են վարձատրութեան հաշուի մէջ. խոստացել են իրաքանչիւր գլխի համար վճարել 10-ական ռուբլի, և փոխանակ 160 ռուբլի տալու (16 հոգու համար, որոնցից 10-ը 1908 թուին և 6-ը 1907-ին), վճարել են 100 ր.։ Զը ստացած գումարը դահիճը ուզեցել է դատարանով պահանջել։

Լսելով այդ սարսափելի գանգատը, փաստաբանը հրաժարվել է որևէ խորհուրդ տալուց։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

—

Հ. Արսէն Ղազիկեան. «Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի»։ Առաջին պրակ Ա.—Թ., Վենետիկ, 1909, գինն է 7 և կէս ֆր.։

Մեր առաջ դրված է մի մեծ աշխատութիւն, մէկը այն պատկառելի և բազմավաստակ գործերից, որոնց համար պահանջվում են շատ տարիներ, անօրինակ ջանասիրութիւն և հմտալից ուսումնասիրութիւն։

Հ. Արսէն Ղազիկեանի ներկայ աշխատութիւնը պարունակում է իր մէջ հայկական գրքերի և մատեանների մասին տեղեկութիւններ սկսած 1512 թուից մինչև 1905 թիւը։

Լոյս է տեսել աշխատութեան առաջին պրակը, որ բովանդակում է իր մէջ գրքերի հեղինակների անունները Ա տառից մինչև Թ։

Ով կամենում է գաղափար կազմել այն բանի մասին, թէ ինչ է արդիւնաբերել հայկական գրիչը գրական շուկայի համար, թէ ինչ հրատարակչական այժ և ընդունակութիւն է ունեցել հայը, թող թերթէ հայը Ղազիկեանի աշխատութիւնը։ Այդտեղ նա կը հանդիպի էջերի, որոնք հիացմունք կը պատճառեն նրան հայ գրական գործերը իրանց ցուցակներով և նկարագիրներով, բայց և շատ ուրիշ էջերի, որոնք ընդհակառակը կը թելադրեն շատ խղճալի գաղափար հայկական հրատարակչական գործի մասին։

Ղազիկեանի գիրքը հայելի է մեր մատենագրական հարստութեան, սկսած հրատարակչական գործի առաջին քայլերից մինչև մեր օրերը։

Այն աշխատութիւններին, որոնք պարունակում են կարևոր բովանդակութիւն, և այն հեղինակներին, որոնք որոշ տեղ են գրաւել գրականութեան մէջ, նուիրված են աւելի մանրամասն տեղեկութիւններ և ծանօթութիւններ։ Առաջ են բերված ամփոփ բովանդակութիւնը, գրախօսական կարծիքներ և ուրիշ վկայութիւններ։ Մի քանի հին և հազուագիւտ գրքերից արտատպված են յիշատակարաններ և հատընտիր կտորներ։

Հեղինակը սկսելով իր ներկայ գործը և ճոխացնելով նրան ժամանակի ընթացքում՝ այժ աւելի ընդարձակ ծրագիրներ է սննդում և նպատակ ունի իրագործել նրանց, տալով արդարև մի հայկական հանրագիտարան, որը պէտք է առատ նիւթ տայ հայկական ուսումնասիրութիւնների համար։

Այստեղ օգտակար ենք համարում առաջ բերել հ. Ղազիկեանի առաջաբանից հետևեալ կտորը.

Հիմա հարկ է որ պարզեմ հոս ծրագրիս միւս մասը՝ որուն հազիւ աղօտ նշոյլները կան սոյն պրակին մէջ։ Նախ ըսեմ որ մատենագիտութիւն ըսելով ես չեմ հասկընար լոկ գիտնալ թէ այս ոք կամ այն՝ ինչ գիրք գրեր է*). այլ նաև գիտնալ թէ ինչ նիւթերու վրայ կը խօսի։ Այս հասկացողութեամբ էր որ դրի արդէն ազգային գրոց բովանդակութիւնները. բայց մեր լրագիրներն ու հանդէսներըն ալ ազգային գրքեր են, մանաւանդ թէ մեր ազգային կեանքին շեմարանները են։ Արդ՝ ազգային ոեէ իր կամ գիր, դէպք կամ դէմք, նշմար կամ նշխար, զոր կը բովանդակէ հայկական լայնածաւալ լրագրութիւնը՝ բոլոր պիտի մտնեն գրծիս մէջ. աւելի պարզ, ազգային կանոնով գրաղուող ինչ յօդուած որ կայ բանասիրական, պատմական, տեղագրական, հնախօսական, կայլն, կայլն. ինչ որ գրուած է այդ կամ այն քաղաքի կամ գիւղի սովորութեանց, բարքերն, աւանդութեանց, հնութեանց, եկեղեցիներու, վանքերու, դպրոցներու, թանգարաններու, թատրոններու, ընկերութեանց կայլն, և այն. ինչ որ գրուած է աշուղներու մասին, իրենց երգերը, կայլն, կայլն. մէկ խօսքով հայ կեանքի հետ առնչութիւն ունեցող ամէն բան՝ միանալով գրքերու մէջ այն նիւթերու մասին գրուածներուն հետ՝ պիտի խտանայ գործիս մէջ։ Եւ այսպէս պիտի ըլլայ իմ գործս ոչ լոկ «Մատենագիտութիւն», այլ նաև «Հանրագիտարան Հայ կեանքի»։ Մենք չունինք դեռ ոչ ազգ. բարբարաներու, ոչ թատրոնի, ոչ թանգարանաց, ոչ ընկերութեանց լիակատար պատմութիւններ, ոչ կենսագրական բառարան մը, ոչ ազգ. ժամանակիս պատմութիւն մը. ասոնք պէտք է յօրինուին, պէտք է օգնել անոնց ապագայ հեղինակներուն։ Այս իմ փափաքս իրագործելու համար ես սկսած եմ կրկին անգամ կըսրել անցնիլ լրագրութեան ովկիանը՝ մանրակրկիտ կերպով մաղելով բոլոր առնոց էջերը. գործ մը՝ որուն ծանրութիւնն որպակզ բան չունի գիտցած հայրենէս։ Ասոնք բոլորը հետզհետէ կը մըտնեն գործիս մէջ և յաւելուածով կամբողջանան։ Ազգային գրքերու բովանդակութեանց մանրամասն կոչումներն ըրած չեմ դեռ. անոնք ալ պիտի ըլլան բոլոր։ Գալով օտար լեզուներէ եղած թարգմանութեանց, սկսած եմ հաւաքել անոնց արձակ թէ ոտանաւոր գրուածներուն անջատ թարգմանութիւնները. Լամարտին անուան տակ պիտի տեսնուին ոչ միայն իր այս կամ այն գրքին մէկ կամ երկու թարգմանութիւնները, այլ և իր այս կամ այն ոտանաւորին մէկ կամ երկու կամ երեք թարգմանութիւններն ալ, և երբ սկիսմ գրքերը քրքրել՝ ծաղկաքաղներու մէջ եղածներն ալ. այսպէս ամէն օտար հեղինակ։ Փափաքելի էր, որ թարգմանիչները դնէին միշտ հեղինակներու անուններ։ Գրական արժանիք ունեցող բոլոր ինքնագիր յօդուածներն ալ պիտի մտնեն։ Ինչպէս տեսնում ենք, հ. Ղազիկեանի սկսած աշխատութիւնը իր խոստացած յաւելուածներով պէտք է ներկայացնի մեզ մի հոյակապ գործ, որը պէտք է օգտակար մի մատեան լինի թէ մասնագէտ գրասէրի և թէ իւրաքանչիւր գրական գործողի համար, որ ցանկութիւն ունի ծանօթանալ մայրենի գրականութեան և նրա հեղինակների հետ։

Ծրագիրը վերցված է ընդարձակ և կը խլէ աշխատասիրողից շատ մեծ ժամանակ և կը պահանջէ այնպիսի աշխատանք, որը կը լինէր տաժանակիր, եթէ նրա մէջ չը լինէին խմբագրողի համար ներքին ոգևորիչ իմաստ և բարձր օգտակարութեան հաւատիք։

Ջերմագին ցանկութիւն ենք յայտնում, որ անխոնջ աշխատասիրողին աջողվէր լիակատար անել իր գեղեցիկ ընդարձակ ծրագիրը։

Ա. Քալանթար

*) Ասի պաշտօնն է ցուցակի մը, որ արդէն ըսկսած է առանձին տպագրուիլ և գործիս վերջին պրակին հետ լոյս պիտի տեսնէ «Առձեռն Մատենագիտութիւն» խորագրով։

ՄԱՄՈՒԼ

Երբ Թիւրքիայում այնքան անակնկալ կերպով պայթեց անարիւն և խաղաղ յեղափոխութիւնը, որոշ բանակի մարդիկ սկսին աղաղակել, թէ Թիւրքիան ձեռք բերեց ազատութիւնը շնորհիւ այդ բանակի մարդկանց։ Եւ իրրև վկայութիւն առաջ էին բերում թիւրք ազատականների յայտնած կարծիքները, թէ շնորհիւ հայ յեղափոխականների ձեռք բերվեց ազատութիւնը։

Սակայն այժմ հազիւ անցել է 6 ամիս, և այդ աղաղակողներն իրանք սկսել են կասկածել այդ կարծիքների անկեղծութեան վրա և յանդիմանել թիւրք ազատականներին, որ սրանք խաբեցին իրանց և շահագործեցին։

Այդ տեսակէտից ուշագրաւ է Մարսէյլի «Արմէնիա» թերթի մէջ տպված մի նամակ, Բէյրութից, որի մէջ յօդուածագիրը, հերքելով թիւրք լրագիրների գրածները՝ թէ հին ըէժիմը և հարստահարութիւնները հայերի վերաբերմամբ դարձեալ շարունակվում են, կրում է հետևեալը.

Արդ, հիմա որ օսմ. կառավարութեան պաշտօնեաները մեծ մասամբ դեռ առաջուան միապետականներն են և չեն փոխուած և ոչ ալ արիւնամոլ քիւրդ բէյերն իրենց արդար պատիժը գտած են, որով անեկիւղ կը շարունակեն իրենց սովորութիւն դարձած կեղեքումներն ու չարիքներն ամէն տեղ, ուրեմն այս իրողութիւններուն հանդէպ ինչո՞ւ պիտի ստեն հայերը և զրպարտեն. և ինչո՞ւ քսիթէն, թիւրք թերթերը և կառավարութիւնը կաշխատին հերքել։ Ոչ, օսմ. ներքին նահանգներուն և մանաւանդ Հայաստանի ներկայ արգահատելի վիճակին մօտէն ծանօթ եղող մը կարելի չէ որ հաւատայ թէ օսմ. ներկայ ազատութիւնը իր այս դրութեամբ ընդհանրական բան մըն է։ Ոչ երբէք։

Մի մեղադրէք զիս իրրև յոռետես, երբ ըսեմ, թէ օսմ. ներկայ ազատութեան հեղինակներն անգամ միմիայն թիւրքական շահուն համար էր որ փոխեցին հին ըէժիմը, վասն զի երբ տեսան թէ սուլթան Համիդը Թասխին, Իզզէթի, Աբիւլ Հիւդայի, Զիայի, Մէշհամէներու, Զէքիի և ասոնց նման շատ մը անհոգի մարդոց ձեռք յանձնած է իր տէրութեան դիկը, որանք այն աստիճան լրբացած են որ ստրուկ հայերու գլխուն մաղած կրակն ու սև փոշին սկսած էին խլած երիտասարդութեան, ուսանողութեան և զինուորութեան դլխուն ևս մաղել... և տէրութեան գանձը կողոպտելով սուլթանի քթին խնդալ և տկարացնել տէրութիւնը, այնպէս որ Եւրոպան այս բոլորը կռահելով համաձայնած և որոշած էին մէջերնին բաժնել Թուրքիան պատրուակով մը, իրենց այդ ցաւալի կացութեան հանդէպ դարման մը և արդելք մը դնելու համար, թիւրք ազատականները ձեռնարկեցին նախ՝ Եըլդզի հեշտութիւններուն մէջ խրկացող սուլթանը մեծ սպառնալիք արթնցնել, հնարք մը գտնելու համար։ Եւ ահա շուարեալ սուլթանը վիճաբ երիտասարդ թիւրքերու պահանջին և Միթհադ փաշայի շինած կանոնը էսասին մէջտեղ դրուեցաւ, որով յաջողեցան Եւրոպան հա կեցնել իր որոշումէն, որպէս թէ թիւրքիան առանց արեան սահմանադրական ազատ կառավարութեան մը փոխուած ըլլայ, և ոչ միայն այսչափ, այլ մէկ բարով քանի մը ճնճղուկ որսայ, այն է թէ իր աչքի փուշը հանեց և թէ Եւրոպայի ձեռքի պատրուակը խլեց և հիմա ալ Բէյրլիսի դաշնագրի 61-րդ յօդուածը փճացնել կուզէ։ Ուրեմն աչքկապուկի այս բոլոր խաղերուն մէջ ինչ է հայուն շահը և ուր է անոր գտած ազատութիւնը...։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 8 մարտի

Իմ կօլլեգաներից մէկը՝ դայրանալով, որ ես պետական դպրոցների հայոց լեզուի նոր ծրագրի դէմ բողոքել եմ ու առանձին կարծիք ներկայացրել Կովկասի ուսումնական շրջանի պ. հոգաբարձուին, թոյլ է տուել իրան «Գործի» № 49-ում դիմելու զանազան ինսպեկցիաների և իմ մասին անճիշդ տեղեկութիւններ հաղորդելու։ Իրաւունք չունենալով դեռ չը հաստատված նոր ծրագիրը և իմ ներկայացրած պաշտօնական առանձին կարծիքը մամուլի նիւթ դարձնելու, ես ստիպված եմ ասելու միմիայն հետևեալը.

Ես միագամայն համաձայն եմ Գ. Բ.-ի հետ, որը «Մշակի» № 40-ում արդարացի կերպով բողոքում է նեղսիրտ, միակողմանի և տենդենցիոզ ոգով կազմված նոր ծրագրի դէմ։ Այդ նոյն բողոքը կրկնում է № 54-ում և պ. Լևոն Մանուէլեանը, որը նոր ծրագրի մէջ գտնում է կամայականութիւն ու տենդենցիոզ ոգի։ Իսկ պ. Կալխասը «Մշակի» № 44-ում գրում է, որ նոր ծրագրի մէջ առաջնակարգ տեղ է տրված գրականութեան ներկայ թայֆայական ներկայացուցիչներին, որոնք դեռ ևս կարօտ են լուրջ գրական-քննադատական ուսումնասիրութեան և որոնց գնահատման վերջնական որոշումը դեռ չէ տեղի ունեցել հայ գրականութեան մէջ։ Հէնց այդ մտքով էլ ես եմ բողոքել և առանձին կարծիք ներկայացրել պ. հոգաբարձուին։ Ես բողոքել եմ գլխաւորապէս այն վիճելի նորագոյն գրողների դէմ, որոնք դեռ ևս գրականութեան սեփականութիւն չեն ճանաչված և առանձին ուսումնասիրութեան առարկայ չեն կարող համարվել, ինչպէս օրինակ Վ. Փափազան, Յովհաննէս Թումանեան, Աւետիք Իսահակեան։ Ճիշդ է, կան մի շարք իրաւ խելքի մարդիկ, որոնք շատում են այս գրողներին հեղինակութիւն հռչակել ըէկլամ անել և վաստակել նրանց համար վաղաթառամ էժանագին դափնիներ, սակայն մեր մամուլում եղել են նրանց մասին շատ անպատշաճ կարծիքներ, որոնք վիճելի են դարձրել նրանց «տաղանդը»։

Ի դէպ նկատենք, որ պ. Վրթանէս Փափազեանին 1907 թուին Թիֆլիսի III արական գիմնազիայում հայերէնի ծրագիրը կազմողները արժանաւոր գրող չեն ճանաչել և նրա անունը չեն մտցրել ծրագրի մէջ։ Իսկ նոր ծրագրում նա փառաւոր տեղ է բռնում, որովհետև այդ ծրագիրը կազմելուն ինքը Փափազեանը անձամբ մասնակցում էր եռանդուն կերպով և՝ իր իւրայինների հետ միասին՝ տալիս էր նրան իր ցանկացած գոյնը. պարոնը՝ մինչև անգամ, թոյլատրութիւն խնդրելով իր համախոհ ժողովականներից, ինքը մատնանշեց ծրագրի մէջ մտցվելիք իր «հնաշարհիկ» ստեղծագործութիւնները։ Սրանով ես բնաւ չեմ ուզում վիրաւորել պ. Փափազեանին. այլ միայն կամենում եմ բնորոշել նոր կազմած ծրագիրը և յիշեցնել իմ կօլլեգային, որ դուք է նա ճնում Փափազեանի նման բանագողներին և վիճելի գրողներին գրականութեան սեփականութիւն դարձնել ու նրանց առաջնակարգ տեղ տալ։ Փափազեանը ինքն է իրան համարում առաջնակարգ գրող։ Սրանով ես չեմ ուզում պնդել, որ «Գործում» Փափազեանին առաջնակարգ գրող համարող կօլլեգաս հէնց ինքը Փափազեանն է, քանի որ յօդուածի տակ չը կայ նրա ստորագրութիւնը։

Աննպաստ կարծիքներ են յայտնվել մեր մամուլում նաև եալլինների երգիչ Ա. Իսահակեանի և միւս վիճելի նորագոյն գրողների մասին։ Այսպէս օրինակ «Տարազը» ապացուցեց Ա. Իսահակեանի բանագողութիւնը, երբ նա «Աստղ» ոտանաւորը ամբողջապէս թարգմանելով ռուսերէնից («Метеоръ») զետեղել էր «Մուրճում» իբրև սեփական գրուածք և նրա տակ դրել իր ստորագրութիւնը։ Ահա սրանք են մտցված ծրագրի մէջ։

Տարօրինակն այն է, որ պատուելի կօլլեգաս ինձ անձեռնհաս հռչակելու համար՝ Աղայեանի, Մուրացանի, Յովհ. Յովհաննիսեանի և Շիրվանզադէի նման գրողների կողքին իր նամակում դիտմամբ դրել է և Յովհաննէս Թումանեանի, Աւետիք Իսահակեանի և Փափազեանի անունները ու ինձ մեղադրում, որ իբր թէ այս բոլորին ես երկրորդական գրող եմ համարել։ Այն ինչ իմ պաշտօնական կարծիքի մէջ ես բնաւ երկրորդական ու վիճելի չեմ համարել Աղայեանին, Մուրացանին, Յ. Յովհաննիսեանին և Շիրվանզադէին։ Ես վիճելի և երկրորդական եմ համարել նրանց, որոնց անունները իմ կօլլեգան դիտմամբ խառնել է միւս մեր յայտնի գրողների հետ։

Իմ ծպտեալ կօլլեգան զուր է աշխատում հաւատացնել ընթերցողներին, որ իբր թէ նոր ծրագրի հետ առայժմ միայն ժողովի անդամներն են ծանօթ և չէր կարող մանրամասնութիւնները գիտենալ նրա մասին պ. Գ. Բ.։ Կօրբէկտ լինելու համար իմ կօլլեգան չը պիտի ուրանար, որ հէնց ինքը և ժողովի միւս անդամները առանց իմ մասնակցութեան, նոր ծրագրից մի քանի օրինակ ուղարկել են զանազան տեղեր, ինչպէս այդ վկայում է Լևոն Մանուէլեանը, որ կարդացել է նոր ծրագիրը Ալեքսանդրօպոլում «Ախուրեանի» խմբագրատանը։ Պարզ է ուրեմն, որ բացի ժողովի անդամներից՝ ուրիշներն էլ կարող են ծանօթ լինել ծրագրի հետ։

Ինչ վերաբերում է այն հարցին, որ իբր թէ ես «շատ ճնել եմ, դիմել զանազան միջոցների անունս մտցնել տալու. ծրագրի մէջ»,—այդ միտումաւոր սուտ է, որ հնարել է իմ կօլլեգան։ Ես ոչ մի միջոցի չեմ դիմել և երբէք մտքովս անգամ չէ անցել անունս մտցնել տալու ծրագրի մէջ, քանի որ ես սկզբունքով դէմ եմ նորագոյն գրողներին ծրագրի մէջ մտցնելուն, ինչպէս այդ արել եմ և իմ պաշտօնական կարծիքի մէջ։ Հաւատացէք, որ եթէ անունս մտցնէին էլ ծրագրի մէջ, ես դարձեալ դժգոհ կը մնայի և կը բողոքէի պ. հոգաբարձուին։ Ապացոյց առածիս կարող է լինել Գ. Վանցեանի «Հայ հեղինակները», որի մէջ թէպէտ մտցված են իմ ոտանաւորներն ու անունս, բայց ես այդ գրքի մասին զետեղեցի «Նոր-Դարում» մի շատ խիստ քննադատական։ Բացի դրանից ինձ շատ էլ հաճելի չէ հայերէնի ծրագրում բաղել Փափազեանի նման պլագիատորների ուրդական ֆոկուսնիկների կողքին։

Ծրագրի դէմ բողոքող ուսուցիչը

—

Թիֆլիս, 21 մարտի

Պետական դպրոցների բարձր դասարանների համար, հայոց լեզուի դասագիրք կազմող չորս անձնաւորութիւններից մէկն է պ. Վրթանէս Փափազեանը, որ անշուշտ այդ դասագրքի մէջ պէտք է մտցնէ մինչև այժմ իր ստորագրութեամբ հրատարակված երկերից։

Բայց այդ գրաւոր բոլոր երկերն էլ դեռ ևս կասկածի տակ են,—իր՝ Փափազեանի գրչի արդիւնք են, թէ՞ պլագիատ, իւրացված ուրիշի սեփականութիւն։

Այդ մասին ժամանակին եղել են անպատասխան մնացած դիմումներ, որոնց այժմ պատասխանելու հարկադրութիւն է ծանրանում պ. Փափազեանի վրա։ Մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք այն մեծ ազդեցութիւնն ու նշանակութիւնը, որ ունի ամէն մի դասագիրք սովորողի համար։ Պր. Փափազեանի հետ միասին դասագիրք կազմող միւս երեք ընկերները բարոյական պարտականութիւն ունեն, նախ քան դասագիրքն հրատարակելը, պարզել այն անլոյծ մնացած կնճիռը, որ հաւասարապէս կարող է արատաւորել ամբողջ դասագրքի արժէքը։

Ցանկալի է, որ պ. Փափազեանն ինքը բացատրութիւն տար և ընդմիշտ վերացնէր այն կասկածը, որ քսանուհինգ տարի շարունակ ունեցել ենք նրա լոյս ընծայած բոլոր երկերի վերաբերմամբ։

Եթէ պ. Փափազեանը դժուարանում է յիշել այս հարցի մասին պարբերական մամուլի մէջ եղած յայտնութիւնները, մենք պատրաստ ենք նրան օգնութեան գալ և տարեթուերով ու համարներով ցոյց տալ եղած բոլոր գրութիւնները։ Վռամ Բարայեան

—

Լագոդաղ, 14 մարտի

«Մշակի» № 47-ում Կ. Հ. Բ. Ը. Լագոդաղի ճիւղի վարչութիւնը, վերաւորված նոյն թերթի № 20-ում զետեղված՝ Գ. Ֆ.-ի գրուածքից մի շարք անհիմն մեղադրանքներ է բարդում իմ ու կնոջս հասցէին։

Չեմ ուզում և չէ էլ կարելի լրագրի սուղ էջերը զբաղեցնել լոյն հասարակական նշանակութիւն չունեցող խնդրով։ Թողնում եմ

մի կողմ և այդ գրութեան անվայել ձևը, որ, ի դէպ ասած, պատիւ չէ բերում վարչութեանը։

Սրանով միջնորդ դատարանի եմ հրաւիրում նրան, այն պայմանով, որ դատարանի որոշումները տպագրութեան յանձնվեն «Մշակի» էջերում։ Այսպիսով աւելի հեշտ է արդարութեան հասնելը, քան անտեղի և անօգուտ բանակռիվ։ Նշանակում եմ դատաւորներ իմ կողմից պ. պ. Յովհաննէս Նարինեանցին և Արիստակէս Արուստամովին։ Հոգարարձու՝ Յովհ. Թումանց

—

Թիֆլիս, 24 մարտի

Թիֆլիսի Հայ Տնայնագործ. Ընկերութեան վարչութիւնը խնդրում է տպագրել հետեւեալ հաշիւը, ընկերութեան օգտին տրված «Մանկական երեկոյթի», որ տեղի ունեցաւ Թիֆլիսի Արիստական ընկ. դահլիճներում դեկ. 27-ին 1908 թ.։ Մուտք—տոմսակներից 564 ր. 35 կ., վիճակախաղից 178 ր. 20 կ., կարթից 50 ր., բուֆէտից 30 ր. 41 կ., կոնֆէտտի, սերպանտին և ծաղիկներ ծախելուց 87 ր., կոմսուհի Վորոնցով-Դաշկովայից՝ 100 ր., Դաւիթ Իւզբաշանից՝ 25 ր., Կոնստանտին Փիթոյանից՝ 10 ր.։ Ընդամենը 1044 ր. 96 կոպ.։

Ծախք—Արիստական ընկ. դահլիճների վարձ 150 ր., բուֆէտի ծախք 37 ր. 06 կ., տպագրական, յայտարարութեան, աֆիշներ կպցնելու համար 87 ր. 30 կ., կոնֆէտտիի, սերպանտինի և ծաղիկների համար 24 ր. 50 կ., հիւանին և ծառաներին 15 ր., վարսավիր Վարդանեանին պարիկների՝ համար 65 ր., վիճակախաղի իրերի ծախք 40 ր. 15 կ., պ. Ինոչենցիին՝ մանուկներին պարսովորեցնելու համար 50 ր., երաժշտութեան՝ 50 ր., սինէմատոգրաֆին 25 ր.։ Ընդամենը 544 ր. 01 կ.։ Զուտ արդիւնք մնում է 500 ր. 95 կ.։

Տիկին Հայկանոյշ Մարտիրոսեանը իր վրա ընդունեց հետեւեալը՝ 14 զոյգ «մինուէտի», 12 զոյգ «պիէրօ» և 10 զոյգ ռուսաց ընորոշ հագուստների ծախքերը։ Ընկերութեան վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը այն անձանց, որոնք մասնակցեցին թէ երեկոյթին և թէ իրանց ներկայութեամբ նպաստեցին երեկոյթի նիւթական աջողութեանը, նոյնպէս պրէմիա տուողներին և այն բոլոր մանուկներին, որոնք առանձին հաճութեամբ մասնակցեցին վերոյիշեալ ընորոշ պարերին։ Վարչութիւն

ՎԱՆԻ «ՄԱՐՏԻԿ» ԳՐԱԴ.-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

—

Կոչ հայ հասարակութեան

Օսմ. սահմանադրութիւնը հնարաւորութիւն տուաւ ժողովրդի լուսաւորութեան հիմնարկութիւններ ստեղծելու։

Այդ նպատակաւ Վանի մէջ բացուած է «Մարտիկ» գրադարան-ընթերցարան, որու մուտքը բոլորովին ձրի է՝ նկատելով որ հասարակութեան մեծամասնութիւնը և ուսանողութիւնը չեն կրնար վճարով օգտուիլ։

«Մարտիկ» գր.-ընթերցարանը գերազանցօրէն ժողովրդական հաստատութիւն է։

Ներկայիս մենք կոչ կընենք ամէն անոնց, որոնք ունին տաք սիրտ մը որու մէջ մի տեղ տուած են ուսումնասիրաւ ազգաշնակութեան և անոր լուսաւորութեան մեծ գործին։

Անոնց, որոնք կը յարգեն գաղափարական, երիտասարդ նահատակի անբիծ յիշատակը, որուն նուիրուած է գրադարանը և որ պէտք է ըլլայ Մարտիկի ժողովրդանուէր գործին շարունակութիւնը։

Անոնց, վերջապէս, որ գիտեն նուիրել, գիտեն զոհել։

Այն գրքերը, որ ձեզմէ շատերու մօտ իրենց դերը կատարած են, հնարաւորութիւն տուէք, որ անոնք նորէն կեանքի մէջ մտնեն և լոյս տարածեն։

Թող մաշուին անոնք ժողովրդի ձեռքերուն մէջ։

Թող հալին, լուծուին անոր մտքին մէջ։

Ժողովուրդը լոյս կը սպասէ ձեզմէ։

Գրքեր և դրամական նուէրներ կրնան ղրկուիլ Վան «Մարտիկ» գրադարան-ընթերցարանի հասցէով՝ Van (Turquie d'Asie) Bibliotéque «Martik» և կամ «Մշակի» խմբագրատուն։

Նուիրատուութեանց հաշիւը կը ներկայացուի մամլոյ միջոցաւ։

Ի դիմաց Վանի «Մարտիկ» գր.-ընթերցարանի՝ Արտ. Սօլաքեան, Արտէմիս

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԵԱՊՕՆԻԱ ԵՒ ԹԻՒՐՔԻԱ

Եապօնացիները Թիւրքիայի մասին.—«Nort China Herald» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հետաքրքրական կերպով է ընորոշում եապօնաթիւրքական յարաբերութիւնները։

Թիւրքերը նայում են եապօնացիների վրա որպէս սկսնակ թղթախաղացը փորձած աւագ եղբօր վրա՝ և զարմանում են, թէ ինչի եապօնիան մինչև այժմ շնորհաւորութիւններ չուղարկեց թիւրքաց պարլամենտին սահմանադրութիւնը մտցնելու առիթով։ Հին ըէժիմի ժամանակ եապօնիան չը կամեցաւ իր դիպլոմատիական ներկայացուցիչները և հիւպատոսներն ունենալ։ Այժմ երիտասարդ թիւրքերը ուզում են բարեկամանալ եապօնիայի հետ։ Սակայն եապօնացիները, ուսումնասիրելով թիւրքիան, իրանց համար օգուտ չեն սպասում այնտեղից և յոռետեսութեամբ են խօսում գործերի նոր դրութեան մասին Կ. Պօլսում։ Եապօնական մի հեղինակաւոր օֆիցէրի խօսքով, կատարելապէս անհասկանալի է անգլիացիները հաւատը դէպի թիւրքիայի վերածնութիւնը։ Կաշառակերութիւնը զօրքի մէջ ծաղկում է առաջվան պէս, ֆինանսները կատաբելապէս խախտված են, տնտեսական կախումը Գերմանիայից նշանաւոր է, որովհետև այնտեղ են պատուիրվում ռազմամթերքները և թնդանօթները։ Պատերազմի դէպքում Աւստրիայի հետ՝ Թիւրքիան ջարդուփշուր կը լինէր։ Աւստրիական զօրքը շատ լաւ է պատրաստված, իսկ թիւրքաց զօրքը, չը նայելով մարդկանց քաջութեան, խոշոր պակասութիւններ ունի։ Ընդհարումը Բալկանների վրա՝ սերբիական և թիւրքաց զօրքերի անագին պարտութիւնների և Աւստրիայի յաղթութիւնների մի շարք կը լինէր։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

23 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երէկ երեկոյեան Պետերբուրգից մեկնեց մինիստրների խորհրդի նախագահ ստատս-սեկրետար Ստոլիպինը ընտանիքով։ Կայարանում ճանապարհ դրին մինիստրները Կոկովցէվի գլխաւորութեամբ։

Օրվայ ընթացքում խօլերայով հիւանդացաւ 3, մեռաւ 1 հոգի։

Եարօսլաւլի նահանգը պաշտօնապէս յայտարարվում է խօլերայից ապահով։

Դրաւվեց «Вечеръ» լրագրի № 283-ը։ Խմբագիր Սավիչը պատասխանատուութեան է ենթարկվում քր. պատժ. 128-րդ յօդուածով։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Երէկ, առ. ժամը 6-ին տեղական տպարանում գրաւեցին սոց.-յեղափոխականների թռուցիկը՝ տպելու ժամանակ։ Ձերբակալվեցին տպարանատէրը և եօթերորդ դասատան նրա աշակերտ որդին։ Երկուսին էլ ուղարկեցին բանտ։ Տպարանը կնքվեց։

ՐՕՍՏՕՎ Դ/վ.։ Գիշերը Դոնեան ստանիցայում 30 չարագործներ յարձակվեցին հոդատիրոջ դաստակերտի վրա, որ երէկ եկել էր բանուորների ռոճիկները տալու հաւար։ Չարագործները ներս ընկան տունը վառած ջահերով, յափշտակեցին 400 ռուբլի, արժէքաւոր իրերը և անյայտացան։

ՄԻՆՍԿ։ Առաջիկայ տօների առիթով նահանգապետի կարգադրութեամբ մի քանի բանտարկեալներ արձակվեցին։

ԿԱԼՈՒԳԱ։ Նահանգապետը հրամայեց տօների առիթով մի քանի բանտարկեալների ազատ թողնել։

ՄՕԳԻԼԷՎ։ Զուրը կամաց-կամաց պակասում է։ Հեղեղի երկիւղն անցաւ։

ՊԱՒԼՈՎՈՐՈԴ։ Զէմստվային արտակարգ ժողովը 30,000 ռուբլի յատկացրեց հեղեղից վնասվածներին օգնելու համար։

ԽԷՐՍՕՆ։ Պրիվալնի գիւղում Ինդուլց գետը ծածկել է 175 տուն։ Զուրը բարձրացել է երկու արշին. վնասները ահագին են։

ՐՕՍՏՕՎ Դ/վ.։ Դոնը բաւականաչափ մաքրվեց սառոյցից։ Ապրանքատար նաւերի երթևեկութիւնը սկսվեց Ռոստովի և Դոնեան ստանիցաների միջև։

ԼԻԲԱՒԱ։ Եկաւ ծովային մինիստրը։

ՆԷԱՊՕԼ։ Եկաւ Բուզվէլտը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

Վան, Վահան էֆ՝ Մարութեանին։ Դուք հարցնում էք, ինչու համար ենք ուղարկում ձեզ «Մշակի», քանի որ դուք չէք բաժանորդագրվել։ «Մշակի» խմբագրութիւնը երբէք սովորութիւն չունի ում և իցէ իր թերթն ուղարկել, առանց բաժանորդագրութեան։ Ձեզ ուղարկվող «Մշակի» մի օրինակի համար բաժանորդավճարը ստացել ենք Մօսկվայից, պ. Վարդան Կաղանճեանից, որ խնդրել է 1909 թ. ընթացքում ուղարկել ձեզ «Մշակ»։ Համեցէք դիմել նրան և իմանալ։ Հասցէն հաղորդեցինք ձեզ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վենէրական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՄԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վենէրակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՑԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. անկաբարձ., կանանց և երեխայոց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Մ. ՏՈՒՐԲՕՎԻՉ—1½—2 ժ. մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՑԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Դ. Ա. ՂԱՄՅԵԱՆԻ
„ՔԵՕՐՕՂԼԻՆ"
Քեօր-օղլու պատկերով, նուէր հայ կարիքներին
Բովանդակութիւն
1) Քեօրօղլին կալանաւոր։
2) Քեօրօղլին ջաղացպան։
3) Քեօրօղլու թուրը։
32 մեծադիր երես, գինն է պօստի ծախսով 20 կ.
Գաւառացիները կարող են ուղարկել 20 կ. պօստային մարկաներ։
Դիմել՝ «Գուտտենբերգ» գրավաճ. Թիֆլիս։
Նոյն տեղը վաճառվում է նոյն հեղինակի «Արութիւն և Մանուէլ» վէպը, գինը 60 կ.։
(օ. մ.) 249. 2—1

Լաւագոյն նուէր հայ մանուկների համար՝
Գունաւոր պատկերազարդ Մանկական գրադարան
Հեղինակութիւն ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
1. Շունն ու կատուն 25
2. Անբախտ վաճառականներ . . 35 կ
3. Գառնիկ ախպերը . . . . . 50 »
4. Անյաղթ աքլորը . . . . . 15 »
5. Ծիրը . . . . . 15 »
6. Ուլիկը . . . . . 15 »
7. Աղուէսը . . . . . 15 »
50 օրինակից ոչ պակաս առնողներին 25%-ով զեղչ, դուրս գալով ճանապարհածախսը։ Հատ-հատ առնողները բարեհաճեն վճարել ճանապարհածախս 20 կ. տարողչ կօմպլիկտի և 10 կ. մի հատի համար։ Ապառիկ չէ ուղարկվում։
Դիմել՝ Тифлисъ, Паскевича ул., № 6. М. Тумановой.
(կ.և.հ.)» 237. 4—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԿՐՕՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Հիւսեց
Երուանդ վարդապետ
ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑ
XI և 433 էջ, գինն է 1 ր. 50 կոպ.
Դիմել էջմիածին, Երուանդ վարդապետին։
231. 5—5

Մանկաբարձուհի եւ մասնաժիս
Հ. ՍԱՆԹՈՒՐԵԱՆ-ԴԱՒԹԵԱՆՑԸ
Ընդունում է ծնունդներ և բժշկում է բժշկի խորհրդով կանացի հիւանդութիւններ, սրսկում է կանանց, տղամարդկանց և երեխաների կաշուի տակ թէ իր և թէ հիւանդների մօտ մատչելի գնով։ Գաւառացիներին տալիս դիւրութիւն և խորհուրդներ կանանց հիւանդութիւնների վերաբերմամբ։
Ընդունելութիւնը ամեն օր ժամը 12—1-ը, իսկ կիրակի օրերը պատուաստում է ծաղիկ։ Հասցէն՝ Петхаинскій подъемъ № 4, д. Симонянца.
(հ. կ.) 51. 50—24

«Մշակի» յայտարարութիւններից օգտվողներին առաջարկվում է պատուէրներ տուած ժամանակ յիշատակել լրագրի անունը և համարը։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՀԱՍԿԵՐ
№ 3 մարտ 1909 թ.
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. «Զատկական նուէր».—2. «Մի կաթիլ մեղրը» հէքիաթ Յովհ. Թումանեանի.—3. «Սօնիկը» Սերոբ.—«Հիւանդ կատուն» փոխ. Համլիկ Թումանեան.—5. «Իմ բաղդիկը» (մանկական յիշողութիւն) Ա.թ. Խնկոյեան.—6) «Գուտուկը» Ա.թ. Խնկոյեան. «Գաղտնիք» Ստալեան.—7. «Մարտի փոխը» Յովհ. Կոստանեանց.—8. «Բարի աշողում, բարեկամ...»—9. Սալորի ծառի վրա (պատմուածք) Շուշանիկ Տէր-Նիկողոսեան.—10. «Երասխի վրայով» (մանուկի յիշատակարանից) Վ. Փափազեանց.—11. «Գարուն» Գ. Մեսեանց.—12. «Դբբընդէզ» (գիւղական պատկեր) Յակ. Ազարաբ.—13.—«Զարլըզ Դարվին» (ծննդեան հարիւրամեակի առիթով) Նիկ. Սարգսեանց.—14. «Զուարճալիք, Մարիամ տատիկի տոպրակից»։

Այս համարի հետ ուղարկվում է բաժանորդներին ձրի յաւելուած Զատկական նուէր «ՔԱՋ ՇԱՄԲՈՐԴՆԵՐ», ժողովրդական հէքիաթ, պատմեց Ս. Լիսիցեան (բազմաներկ հրատարակութիւն)։

КОНЬЯКЪ О. С.
Д. З. САРАДЖЕВЪ
Тифлисъ.
Главная Контора обращаетъ вниманіе любителей на этотъ, вновь выпущенный на продажу,
ОЧЕНЬ СТАРЫЙ коньякъ.
(19, 22, 25, 26) 229. 4—3

100 ՐՈՒԲԼԻ ՊԱՐԳԵՒ
կը ստանայ իւրաքանչիւրը, որը կապացուցէ, թէ մինչև օրս չեղած արժէք ունեցող մեր առաջարկած օգտ. 12 առանձին առարկաները չարժեն այն գինը, որ նշանակված է, այսինքն՝ 3 ր. 85 կոպ.։
Պահանջեցէք և կը համոզվէք!
1) Տղամարդ. գրպանի շքեղ ժամացոյց, բաց, սև պողպատից, անէկրային ընթացքով (ոչ ցիլինդր), քարերի վրա, զսպանակը կտրվելուց պահպան. գործիքով, փոշուց պահպանող ապակիով և մինչև բոպէները ստուգված ընթացքով։ 2) Շղթայ՝ մշտական սպիտակ փայլող մետաղից, մաքուր նիկէլից կամ սև պողպատից, երկար կամ թէ կարճ, «Շատլէն» անունով։ 3) Նորութիւն.—Աւտոմատ կինեմատոգրաֆ-ըրէլօկ, շքեղ շինուածք, կանացի հետաքրքք. նկարով։ 4) Այժեմաշկի քսակ ժամացոյցի համար։ 5) Ժամաց. գողացվելուց պահպանող գործիք։ 6) Դոկտոր Կոխի մունդշտուկ-ապպարատ՝ անվնաս ծխելու համար։ 7) Արտասահմանեան կաշուէ պօրտմոնէ՝ 7 բաժանմունքներով (առանձին բաժ. ոսկէ դրամների համար), մեխանիկ՝ փականով և կնիքի համար առանձին բաժանմունքով։ 8) Կաուչուկէ կնիք՝ ապպարդի անուն-ազգանունով։ 9) Կնիքի համար մի սրուակ թանաք։ 10) Իսկական պողպատից ածելի «Սելինգէն» անունով, գեղեցիկ պատեանի մէջ։ 11) Մաքուր նիկէլից թաս։ 12) Նիկէլեայ վրձին։ Այդ բոլոր զարնիտուրը միայն 3 ռուբ. 85 կոպէկով։ Կանացի ցիլինդր. ժամացոյցի հետ միասին—4 ր. 25 կ.։ Տղամ. կամ կան. խուլ ժամացոյցի հետ միասին—5 ր. 25 կ.։ Երաշխաւորութիւն 6 տարով։ Պատուէր ստանալուց ուղարկվում են անմիջապէս, առանց կանխավճարի, վերադիր վճարով։ Ճանապարհածախքը՝ Եւրոպական Ռուսաստան 55 կ., Սիբիր 90 կ.։ Պատուէրները խնդրում ենք հասցէագրել՝ «Базаръ Новостей» Варшава, Грибная площ., 6—153.
(4, 18, 25) (В. 3211) 160. 3—3

CONSTIPATION
PILULES DE CASCARA MIDY
ԴԵՂԱՀԱՏՆԵՐ
Cascara Midy
Ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐՈՒՈՊՈՒԹԵԱՆ դէմ
Ընդունելութեան չափը. 2 դեղահատ երեկոները, պառկելուց առաջ.
Cascara Midy-ն (Կասկարա Միդի) չէ առաջացնում որովայնի մէջ ցաւեր, ոչ էլ հեւոց և փորլուծութիւն։
Դեղավաճառանոց MIDY, 140, faubourg St. Honoré, Փարիզ. Ռուսաստանի գլխաւոր դեղավաճառանոցներում։
(5,15,25) (320257) 0—18

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕՇԿԵՂԷՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամեն տեսակի մոդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի խանութներում։
ՖԱԲՐԻՉՆՈԵ ԿԼԵՙՄՈ
Իսկականը միայն այս դրոշմով
С.ПЕТЕРБУРГЪ.
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՐԷԶԻՆ. ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ТРЕУГОЛЬНИКЪ"
ԱՆՈՒՆՈՎ
Թիֆլիսի բաժանմունքը գտնվում է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ
ԱՅԴՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍ ԿԱԶՈՒԼԻՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕԶԻԿՆԵՐԻ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՐԷԶԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Կրէմ եւ Ապրետուրա կօշկեղէնի համար
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ.
(2.) 182. 0—5

Электропечатня Н. Г. Аганьянцъ Полицейская 7.